Передача государствами-членами части своих суверенных прав ЕС привела к значительному расширению правотворческой и правоприменительной компетенции ЕС. Но они не утратили право по развитию национальных законодательств. Скорее всего произошло «переплетение» двух слоев правового регулирования в отдельных отраслях – европейского и национального. Более того, нормы европейского права скорее не отменяют, а воздействуют на национальные правовые системы с целью их гармонизации. Коллизионные нормы в учредительных договорах ЕС позволяют решать вопрос в пользу европейского права в случае противоречия ему положений национальных законодательств. Причем речь идет не об отмене, а о неприменении последних [1].

На данный период времени право Европейского Союза регулирует жизнь более чем 500 миллионов человек из 28 стран-членов ЕС.

Интерес мировой общественности, а в особенности мирового юридического сообщества к ЕС в целом, и к его правовой системе, в частности, с каждым годом только возрастает. И более тесное знакомство с особенностями правотворческого процесса ЕС с точки зрения ценности накопленного опыта может быть полезным и представлять практическую пользу для государств уже вовлеченных или планирующих вступление в другие интеграционные объединения.

В юридической литературе принято обозначать процесс образования и установления норм права такими терминами, как «правообразование», «правоустановление», «нормотворчество», «правотворчество», но наиболее часто встречающимися терминами являются «правообразование» и «правотворчество».

Трудно не согласиться с мнением С.Г. Дробязко. Сравнивая правотворчество с правообразованием, он делает вывод, что правотворчество является собой бо-

лее значимый, поистине творческий, организационно юридически упорядоченный процесс. А правообразование представляет собой процесс, в ходе которого «вызревает», формируется право [2].

По мнению А.Б. Венгерова, правотворчество это организационно оформленная процедурная деятельность государственных органов по созданию правовых норм или признанию правовыми сложившихся, действующих в обществе правил поведения [3].

В.Н. Хропанюк рассматривает правотворчество как деятельность, направленную на подготовку, издание и совершенствование нормативно-правовых актов и выделяет две основные его формы: непосредственное правотворчество, осуществляемое в результате проведения референдумов и опосредованное или государственное правотворчество, выражающееся в установлении, изменении или отмене норм права в определяемом законом порядке [4].

В Большом юридическом словаре содержание правотворчества раскрыто как «одна из важнейших сторон деятельности государства, форма его активности, имеющая своей непосредственной целью формирование правовых норм, их изменение, отмену и дополнение». Далее поясняется, что «в каждом государстве правотворчество обладает своими особенностями, но везде оно направлено на создание и совершенствование единой, внутренне согласованной и непротиворечивой системы норм, регулирующих сложившиеся в обществе разнообразные отношения» [5].

Следует учитывать, что Европейский Союз – это не государство, а надгосударственное объединение, а, следовательно, содержание понятия правотворчества ЕС несколько отличается от содержания правотворчества государственного. Оно обладает определенной спецификой, но тем не менее имеет также общие черты с правотворчеством государств.

А.Я. Капустин, считающийся одним из лучших российских специалистов в области Европейского права, а также разработавший ее авторскую концепцию, придерживается того мнения, что «основные цели политики и стратегии ЕС воплощаются в нормотворческой деятельности Европейских сообществ, которую в западной литературе принято определять как «принятие нормативного решения» или «законодательный процесс» ... однако, похоже, что термины “law-making” и “legislative process” могут восприниматься и переводиться как правотворчество» [6].

Уместным будет напомнить, что в 1992 году Европейские сообщества трансформировались в Европейский союз в соответствии с Маастрихтским договором.

В результате сравнительного анализа исследованного материала по праву Европейского Союза, на наш взгляд, наиболее приемлемой дефиницией, раскрывающей содержание правотворческого процесса ЕС является следующее утверждение: «в праве Европейского союза под «правотворческим процессом» принято понимать установленные учредительными договорами процедуры принятия нормативно-правовых актов (регламентов, директив и т.д.) институтами Европейского Союза» [7].

Очевидно, что как государственное, так и правотворчество надгосударственного объединения, в данном случае ЕС, это формирование правовых норм, изменение их, дополнение их, либо отмена. Соответственно, те органы, лица, организации, которые уполномочены создавать, изменять, дополнять или отменять правовые нормы, являются субъектами правотворчества.

Основными субъектами правотворчества в большинстве государств являются прежде всего сами государства в лице уполномоченных органов и непосредственно народ в случае проведения всенародного референдума.

В ЕС правотворческую деятельность осуществляют три основных субъекта. Это прежде всего государства-члены, институты и судебные органы ЕС. Соответственно в результате деятельности вышеназванных субъектов формируются три основные категории права: первичное, вторичное и прецедентное право.

Именно при заключении и пересмотре учредительных договоров государства-члены ЕС становятся субъектами правотворчества и формируется первичное право ЕС.

Институты ЕС, такие как Европейский парламент, Совет Европейского Союза, Европейская комиссия, Европейский центральный банк на базе учредительных документов издают наибольшую часть норм права Европейского Союза. Они содержатся в регламентах, директивах, других правовых актах и формируют вторичное право ЕС.

Под судебными органами ЕС подразумевается прежде всего Европейский Суд справедливости (European Court of Justice) или Суд ЕС, который выступает не единственным, но основным носителем судебной власти Европейского Союза, в результате деятельности которого формируется прецедентное право. Принципы и нормы права, сформулированные в решениях Суда ЕС, считаются обязательными для национальных органов правосудия всех государств членов.

Что касается граждан ЕС, то они также осуществляют правотворческую деятельность в рамках ЕС. «К основным законам демократии принадлежит и тот, в силу которого власть издавать законы должна принадлежать народу», – писал французский просветитель, правовед, философ и писатель Ш. Монтескье [8].

Невозможно представить себе государство, провозгласившее себя правовым и при этом не допускающее участие народа в правотворческой деятельности. Так же и в случае с ЕС, который является по сути своей объединением правовых, демократических государств.

Участие граждан ЕС в правотворческой деятельности институтов ЕС осуществляется преимущественно посредством участия их в выборах Европейского парламента и уже совместно с Советом ЕС Европейский парламент осуществляет законодательную власть.

Договор о ЕС, а, в частности, пункт 3-й статьи 10-ой закрепляет за каждым гражданином право участвовать в демократической жизни Союза и гарантирует насколько это возможно, открытость и максимальную приближенность к гражданам процесса принятия решений.

Более того, право граждан ЕС на гражданскую инициативу закреплено в 11-ой статье Договора о Европейском Союзе. В частности, 4-ый пункт упомянутой статьи гласит, что граждане Союза в количестве не менее одного миллиона человек, принадлежащие к гражданству значительного числа государств-членов, могут выступить с инициативой пригласить Европейскую комиссию в рамках ее полномочий внести соответствующее предложение по вопросам, в отношении которых, по мнению этих граждан, необходимо издание правового акта Союза в целях применения Договоров.

Особого внимания достоин также тот факт, что на правотворчество воздействуют общественные и неправительственные организации. И осуществляют они это воздействие посредством института лоббизма.

Лоббизм как таковой зародился в США и согласно некоторым источникам впервые был зафиксирован в 1829 году, но лишь в 1946 году американцами был принят федеральный закон о регулировании лоббистской деятельности, согласно которому профессиональные лоббисты должны были в необходимом порядке проходить регистрацию. За почти двухсотлетнюю историю своего существования лоббизм превратился в важную составляющую механизма принятия решений на государственном уровне.

Общепринято, что лоббизм – это специфический **институт** политической системы, представляющий собой механизм воздействия частных и общественных организаций-политических партий, профсоюзов, корпораций, предпринимательских союзов и т.п. на процесс принятия решений парламентом.

В ЕС, как и в большинстве современных государств, лоббизм играет важную роль в процессе правотворчества. По мнению специалистов, из общего числа лоббистов преобладают те коммерческие ассоциации, которые выражают интересы крупных европейских бизнесменов.

Весьма примечательно, что в Бельгии существует такое учреждение как Европейский институт по вопросам деятельности публичной власти и лоббирования, что, несомненно, свидетельствует о серьезном отношении к изучению проблем, связанных с лоббизмом. С целью осуществления более эффективной защиты собственных интересов в ЕС многие общественные организации объединились в федерации и конфедерации, в частности, в достаточно влиятельные профессиональные союзы, объединения работодателей, потребительские и экологические ассоциации.

Следует отметить, что в ЕС институт лоббизма и процесс лоббирования законодательно не закреплен, но статья 11 Договора о ЕС предоставляет возможность гражданам и представительным ассоциациям ставить в известность о своих мнениях и публично обмениваться ими по всем сферам деятельности Союза. И обеспечивать эту возможность «адекватными способами» должны институты Европейского Союза. Они же должны поддерживать открытый, прозрачный и регулярный диалог с представительными ассоциациями и гражданским обществом, проводить «широкие консультации» с заинтересованными сторонами.

Достаточно интересный анализ процесса осуществления лоббистской деятельности в государствах Европейского союза провел профессор А.Н. Шохин. Он отмечает, что в ЕС лоббирование, если сравнивать с лоббированием интересов в США, носит более долгосрочный и менее агрессивный характер. Агрессивная тактика, равно как и тактика представления индивидуальных, а не групповых интересов, отвергается в лоббировании на уровне ЕС. По его мнению, европейские лоббисты обычно склонны к конструктивному партнерству с властями, чтобы иметь возможность влиять на законотворческий процесс [9].

Основные стратегии евролоббирования, которые используются в зависимости от обстоятельств, классифицировала Крисси Кайммонс, из консалтингового агентства Kimmons&Kimmons. Одна из них носит название «боевой вертолет» (the gunship) и подразумевает агрессивное лоббирование. Чаще всего используется такая стратегия как «Кофи Аннан» или «Троянский конь» (Kofi Annan or Trojan horse) имеющая целью достижения компромисса между сторонами. Еще одна стратегия названная «хороший полицейский, плохой полицейский» (good-cop, bad-cop), характеризуется бескомпромиссной позицией одной из сторон по отношению к другой. Стратегия, носящая оригинальное название «дантист» (the dentist), имеет целью в рассматриваемой законодательной инициативе удалить «гнилые зубы», то есть нейтрализовать или удалить невыгодные положения. Нередки случаи, когда с целью достижения компромиссного решения возникает необходимость обратиться к неправительственным организациям и тут применяется стратегия «третья сторона» (the third party). И последняя стратегия с необычным названием «осел» (the donkey) применяется в ситуациях, когда бизнесмены ориентируются в лоббировании на интересы тех, кто принимает решения [10].

Современные интеграционные объединения являются теми площадками, где на договорных условиях государства с разными правовыми системами, традициями и национальными менталитетами во имя общего блага стремятся достигнуть взаимопонимания в вопросах сотрудничества в самых разных аспектах. И результаты этого сотрудничества неизбежно «выливаются» в общеобязательные для государств-членов законодательно закрепленные нормы права. Лоббирование интересов в правотворчестве надгосударственных союзов и объединений – тема, несомненно, актуальная, особенно рассматриваемая в свете все большей заинтересованности в выгодах от вовлеченности государств в интеграционные процессы. Безусловно, задачей первоочередной важности является создание внутри объединения государств партнерских отношений на доверительной основе и честном соблюдении достигнутых договоренностей.

Примечательно, что европейские страны законодательно не устанавливают строгих требований регистрации и осуществления лоббистской деятельности. Следует полагать, что именно высокий уровень культуры и правосознания, чувство солидарности и желание достичь всеобщего благосостояния способствуют такому укладу. Богатый опыт ЕС в вопросе тесного сотрудничества политических и эконо-

мических сил при осуществлении правотворческой и лоббистской деятельности, учитывание национальных особенностей и менталитета позволит другим государствам извлечь ценные уроки и уяснить, что союзы или объединения государств, если создаются, то только на основе принципа «все разные – все равные».

#### ЛИТЕРАТУРА

1. Тихомиров Ю.А. Курс сравнительного правоведения. М.: Изд-во «НОРМА», 1996. СС. 167–168.
2. Дробязко С.Г. Правообразование, правотворчество, правоустановление, их субъекты и принципы. Право и демократия: сб. науч. тр. Минск: БГУ, 2003. Вып.14. С.6
3. Венгеров А.Б. Теория государства и права. М., 1999. С. 410.
4. Хропанюк В.Н. Теория государства и права: Учебное пособие для высших учебных заведений/ Под ред. профессора В.Г. Стрекозова. М. 1998. С. 240.
5. Большой юридический словарь / Под ред. А.Я. Сухарева, В.Е Крутских, 2-е изд., перераб и доп. М.: Инфра-М, 2004. С. 469.
6. Капустин А.Я. Европейский Союз: интеграция и право, М., Изд-во РУДН, 2000. С. 189.
7. Եվրոպական միության իրավունք. Եր.: «Բեկոր-հրատ» ՍՊԸ, 2014. էջ 147:
8. Монтескье Ш. Л. О духе законов. СПб., 1900. С. 17.
9. Шохин А.Н. «Журнал российского права», 2012, № 5. Лоббистская деятельность бизнеса в Европейском Союзе: практика, возможности, технологии. С. 85.

#### LAW-MAKING OF THE EUROPEAN UNION: SUBJECTS AND LOBBYING

*K. Hovhannisyan*

#### SUMMARY

In this article revealed the contents of the concepts of law-making and lobbying in general and the European Union in particular. Also reviewed subjects of the law-making process of the European Union and the effectiveness of the institute of lobbying.

**Keywords:** European Union, law-making, subject, lobbying.

#### ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ ԵՎ ԼՈՔԲԻԶՄ

*Բ. Գ. Հովհաննիսյան*

#### ԱՍՓՈՓՈՒՄ

Տվյալ աշխատանքում բացահայտված է իրավաստեղծ գործունեության և լոբբիզմի հասկացությունների բովանդակությունը ընդհանուր առմամբ և Եվրոպական Միությունում մասնավորապես: Ուսումնասիրված են Եվրոպական Միության իրավաստեղծ գործընթացի սուբյեկտները և լոբբիզմի ինստիտուտի արդյունավետությունը:

**Հիմնաբառեր** Եվրոպական Միության, իրավաստեղծ գործունեություն, սուբյեկտ, լոբբիզմ:

**ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԴԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

***Ա.Գ. Մտեփանյան***

**ԱՍՓՈՓՈՒՄ**

Մույն հոդվածում ներկայացվող հարցերը, որպես իրավունքի նոր կատեգորիա ուշագրավ տեղ են զբաղեցնում սահմանադրական իրավունքի գիտության ու պրակտիկ ոլորտում: Նշված հարցերն առավել կարևորվում են սպասվելիք սահմանադրական բարեփոխումների ժամանակաշրջանում:

**Հիմնաբառեր՝** մշտադիտարկում, սահմանադրական արդարադատություն, սահմանադրական ինստիտուտ:

Միջազգային սահմանադրաիրավական միտքը ներկայումս հատուկ կարևորում է հասարակական հարաբերություններում սահմանադրական սկզբունքների ու նորմերի հուսալի երաշխավորումը, այդ հարաբերությունների, այսպես կոչված, սահմանադրականացումը՝ որպես իրավական, ժողովրդավարական պետական համակարգերի կայացման նախադրյալ:

Սահմանադրական իրավունքի բազմաթիվ աղբյուրներում նշվում է, որ շատ երկրներում սահմանադրականության հաստատումը նկատելիորեն հետ է մնում սահմանադրական փաստաթղթային այն լուծումներից, որոնք՝ որպես իրավական մտքի ու մարդկային քաղաքակրթության ձեռքբերումներ, հաճախ ընդօրինակվելով, չեն դառնում տվյալ կոնկրետ հասարակության արժեքային համակարգի օրգանական բաղադրատարրը: Սահմանադրականության հաստատման համար Սահմանադրության առկայությունը դեռևս բավարար չէ: Ավելին, Անգլիան՝ չունենալով մեկ առանձին Հիմնական օրենք, ներկայումս համարվում է Եվրոպայի իրավական, ժողովրդավարական կայացած երկրներից մեկը: Խնդիրը սահմանադրական հիմնարար սկզբունքներն ազգային իրավական համակարգում և հասարակական պրակտիկայում կյանքի կոչելու մեջ է: Միաժամանակ, ազգայինի ու համամարդկայինի ներդաշնակման հիմնահարցը սահմանադրական լուծումների մակարդակում ոչ միայն հրատապ է, այլև ելակետային՝ միջազգային իրավական ներկա զարգացումների համար: Հարցը միայն այն չէ, թե ինչպիսին է Սահմանադրությամբ ամրագրված սահմանադրական կարգը և ինչ սկզբունքներ են դրված իրավունքի ու իշխանության փոխառնչությունների հիմքում: Էական է այն, թե ինչպես է դրսևորվում տվյալ սահմանադրական կարգը հասարակական կյանքում, որքանով են միս ու արյուն ստանում Սահմանադրության հիմնարար սկզբունքները, ով է իշխանության իրական աղբյուրն ու կրողը, որքանով է երաշխավորված ու պաշտպանված մարդու արժանապատվությունը, որքանով են գործնակա-



նում տարանջատ, անկախ ու հավասարակշռված պետական իշխանության մարմինները: Վերջիններիս երաշխավորումն է այն հիմնական չափանիշը, որով հնարավոր է գնահատել սահմանադրականության իրական վիճակը:

Ժամանակակից աշխարհի հասարակական զարգացումները հասարակության կայուն զարգացման խնդրի պահպանման անհրաժեշտությունից ելնելով պահանջում են առավել ժամանակակից մեխանիզմներ: Նման մեխանիզմ առհասարակ անցած դարից սկսած հանդիսանում է դատական սահմանադրական վերահսկողությունը: Այն հանդես է գալիս որպես հնարավորություն և միջոց՝ Սահմանադրության գերակայության ապահովման ճանապարհով հասարակության զարգացմանը կայուն դինամիկա հաղորդելու համար: Այնուամենայնիվ, ժամանակակից աշխարհի առանձնահատկություններ են դարձել համակարգային անկայունությունը, տարբեր ճգնաժամերը, հեղափոխությունները, սոցիալական հետաճը, արժեհամակարգերի անորոշությունը: Մարդու կյանքը, որպես բարձրագույն արժեք, վերածվել է այլ անտեսանելի արժեքների հասնելու միջոց:

Եթե մինչև XVIII դարը իրավական-քաղաքական մտքի զարգացումները բերեցին սահմանադրությունների ընդունմանը և Հիմնական օրենքի միջոցով հասարակության համակեցությանը, ապա Հիմնական օրենքի խնդիրը XXI դարում – սահմանադրականության երաշխավորումն է: Վերջինս կարելի է բնորոշել ինչպես սահմանադրական արժեքների համակարգ, որը կոչված է ապահովելու հասարակության կայուն զարգացումը: Ընդ որում՝ նշված սահմանադրական արժեքները բնորոշում են հասարակության գիտակցության, ներառյալ՝ իրավագիտակցության զարգացվածության մակարդակը:

Վերը նկարագրված խնդիրն առաջ է քաշում ամբողջովին նոր պահանջներ՝ մշակելու և ներդնելու որակապես նոր ամբողջական համակարգ, որը կոչված կլինի իրականացնել սահմանադրական ախտորոշում (դիագնոստիկա) և սահմանադրության մշտադիտարկում (մոնիտորինգ), որպիսիք թույլ կտան գտնել, գնահատել, վերականգնել խախտված սահմանադրական հավասարակշռությունը, ինչպես նաև ապահովել կայունությունը և հասարակության զարգացման դինամիկան: Իրական կյանքի զարգացումները ցույց են տալիս, որ ներկայումս սահմանադրական դիագնոստիկայի և մոնիտորինգի մեխանիզմները բացակայում են, մինչդեռ առկա սահմանադրական վերահսկողության և արդարադատության համակարգը ի գործ է դրվակալել ժամանակակից մարտահրավերներին:

Անհրաժեշտ է նշել, որ տվյալ պարագայում և սահմանադրական վերահսկողությունը և սահմանադրության մոնիտորինգը կազմում են մեկ ընդհանուրի բաղկացուցիչ մասեր: Տվյալ կոնտեքստում վերահսկողությունը գործառույթն է, իսկ մոնիտորինգը՝ տվյալ գործառույթի իրականացման ձևն է: Առհասարակ, վերահսկողությունը՝ որևէ նորմի համեմատական անցկացնելն է սահմանադրության հետ, մինչդեռ մշտադիտարկումը ենթադրում է սահմանադրականության իրական վիճակի բացահայտումը: Սահմանա-

դրության մշտադիտարկման հիմնական խնդիրներն են՝ ա) սահմանադրականության անհրաժեշտ և բավարար մակարդակի ապահովում, բ) սահմանադրական իրավագիտակցության բարձրացում, գ) իշխանության վարքագծի մակարդակի սահմանադրականության ապահովում, դ) սահմանադրական արժեքների տարաբնույթ ընկալման հաղթահարում: Սահմանադրության մշտադիտարկման համակարգը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝ ա) անընդհատ գործող սահմանադրական հավասարակշռման ապահովում, բ) խախտման բնույթի որոշում, գ) սահմանադրականության վերականգնման մեխանիզմների և միջոցների առաջարկում, դ) ապագայում նման խախտումների բացառման երաշխավորում:

Սահմանադրական մոնիտորինգի համակարգը, որպես սահմանադրական իրավունքի կատեգորիա սկսում է դիտարկվել, որպես նոր ձևավորվող ինստիտուտ, այնքանով, որքանով իր էությամբ և բովանդակությամբ է հնարավոր է սահմանել վերջինիս տեղն ու դերը: Սահմանադրության մշտադիտարկման ինստիտուտը դեռևս գտնվում է մշակման փուլում և դեռ բավարար չափով չի ստացել իր կիրառումը աշխարհում [1]:

Հարկ է նշել, որ սահմանադրության մշտադիտարկման, որպես առանձին ինստիտուտի ներդրման խնդիրները պայմանավորված են որոշ գործառնական և ինստիտուցիոնալ լուծումներով: Գործառնական խնդիրներից մեկն է՝ ապահովել սահմանադրության սահմանադրականությունը: Սահմանադրությունը կարող է իրականացնել իր արջև դրված պատվիրանը միայն այն դեպքում, երբ հիմնարար սահմանադրական արժեքներն ու սկզբունքներն արտացոլում են հասարակության արժեհամակարգը, նրանց պատկերացումները և իրավագիտակցության մակարդակը: Այդուհանդերձ, պետք հասկանալ, որ նմանատիպ նորմերը կոչվում են նորմեր-նպատակներ, քանի որ դրանք մնացել և մնում են ցանկացած ժողովրդավարության սկզբունքներին առավելագույնը ձգտող պետությունների սահմանադրություններում: Նշված սկզբունքները հասարակության վարքագծի անօտարելի մաս դարձնելու համար անհրաժեշտ է ապահովել սահմանադրության ինքնաբավ լինելը: Այսպես, նախ և առաջ պետք է բացառել սահմանադրության ներքին հակասությունները, այնպես որ թե ուղղակի և թե անուղղակի ժողովրդաիշխանության սկզբունքները չհակասեն մեկը մյուսին, բացառել իշխանությունների գործառույթների և լիազորությունների հնարավոր և առկա հակասություններն ու անհամապատասխանությունները, իսկ պետական իշխանության իրականացման ընթացքում առաջացող բազմաթիվ տարաձայնությունները, վեճերը գտնեն իրենց լուծումները հենց սահմանադրական նորմերով: Սահմանադրությունն ըստ Հեգելի պետական իշխանության գործառույթների տարանջատումն է [2]: Միայն այդ հակասությունների բացառումը կհանգեցնի սահմանադրական դրույթների հետևողականությանը և սահմանադրական սկզբունքների անխոչընդոտ կիրառմանը [3]:

Հաջորդ խնդիրը վերաբերում է ինստիտուցիոնալ մեխանիզմներին: Սահմանադրության կարևորագույն խնդիրներից մեկն է ապահովել իշխա-

նությունների զսպման և հակակշիռների սկզբունքը: Այսպես՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 49-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը, ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը [4]: Նմանատիպ դրոյթներ նախատեսվում են նաև այլ պետությունների հիմնական օրենքներում (Պորտուգալիա, Լեհաստան, Ֆրանսիա): Հետաքրքիր է Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 80-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն՝ Նախագահը ոչ միայն Սահմանադրության երաշխավորն է, այլ նաև մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների [5]:

Պատահական չէ, որ պետությունների մեծ մասում հիմնական օրենքի երաշխավոր են հանդիսանում հենց պետությունների գլուխները: Այդ երկրներում սահմանադրության պահպանմանը հետևող անձն էլ, կարելի է ենթադրել, իրականացնում է սահմանադրության մշտադիտարկում: Մշտադիտարկման իրականացման արդյունքներն էլ, ըստ էության, կարող են արտահայտվել հանրաքվեի միջոցով: Այսպես՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 111-րդ հոդվածի 2-մասի համաձայն՝ հանրաքվեն նշանակում է Հանրապետության Նախագահը՝ Ազգային ժողովի առաջարկով կամ համաձայնությամբ [6]: Նման պարագայում Հանրապետության Նախագահը ձեռք է բերում սկզբունքային գործառույթ՝ անընդհատ իրականացնելով սահմանադրության մշտադիտարկում: Հայաստանի Հանրապետությունում սահմանադրության մշտադիտարկման արտահայտման մեկ այլ ձևն է Սահմանադրական արդարադատության իրականացման շրջանակներում ՀՀ Նախագահի ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի համաձայն ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու լիազորությունն է [7]: Նախագահին նման գործառույթ վերապահելը հիշեցնում է վերացական սահմանադրական արդարադատությունը: Սակայն այս դեպքում ավելի է հստակեցվում իր կողմից զբաղեցվող դերը պետական իշխանության մարմինների համակարգում:

Սահմանադրության մշտադիտարկման ինստիտուտի զարգացման համար մեծ նշանակություն ունի նաև հասարակության մասնակցություն ակտիվությունն իրավական համակարգի ձևավորման հարցում: Իհարկե, Հայաստանի Հանրապետության գործող Սահմանադրությունը չի ընձեռում օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու հնարավորություն, բայց այդուհանդերձ, ժողովուրդը, որպես իշխանության աղբյուր նույնպես հանդիսանում է սահմանադրական արժեքների և կրողն ու երաշխավորը: Հետևաբար, յուրաքանչյուր արձագանք պետք է հիմք ընդունվի իշխանության կողմից և իրականացվի մշտադիտարկում:

Վերոգրյալից չպետք է դուրս գտնվեն նաև Խորհրդարանն ու Կառավարությունը, որպես օրինաստեղծ և օրենքի կիրառող մարմիններ: Վերջիններս պետք է հիմք ընդունեն մշտադիտարկման արդյունքները, և իրենց գործու-

նեությունը իրականացնելիս առաջնորդվեն այն հանգամանքով, որ մարդու հիմնարար իրավունքներով ու ազատություններով են որոշվում վերջիններիս գործունեությունը, ինչպես օրենքների և այլ իրավական ակտերի բովանդակությունն ու կիրառումը:

Սահմանադրության մշտադիտարկման ինստիտուտում հատուկ դեր է վերապահվում նաև դատական համակարգին և, հատկապես, Սահմանադրական դատարանին: Դատարանի մատչելիության և արդյունավետության և օրենքի միատեսակ կիրառման երաշխիքը մարդու սահմանադրական իրավունքների ապահովումն է, ուստիև հենց դատական համակարգն առաջին հերթին պետք է բացահայտի ընդհանուր իրավական համակարգի և Սահմանադրության միջև հակասությունները: Այդ հանգամանքը նշանակում է, որ դատարանները պետք է ստանձնեն առավել կարևոր դեր և սահմանադրական դիագնոստիկայի և սահմանադրության մոնիտորինգի շրջանակներում:

Սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի դերն անհամեմատ մեծ է նաև սահմանադրության մշտադիտարկման ոլորտում: Սահմանադրական դատարանի հիմնական գործառնությունը Սահմանադրության գերակայության և ուղղակիորեն գործողության երաշխավորումն է, և այդ գործառնությամբ դառնում է հնարավոր միայն այն դեպքում, երբ մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները գործում են ուղղակիորեն, իրավական դաշտը համապատասխանում է Սահմանադրությանը, իսկ քաղաքական վեճերը ստանում են իրենց լուծումները իրավական դաշտում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նշված գործառնությամբ ապահովվում է բավականին հազվադեպ, այս դեպքում առանձնանում են, մասնավորապես, Գերմանիան և Ավստրիան և որոշ այլ երկրներ: Դատարանների, ներառյալ՝ Սահմանադրական դատարանների կողմից այդ գործառնության արդյունավետ կատարումն ուղղակիորեն արտացոլում է պետական իշխանության համակարգի գործունակությունից: Սահմանադրական արդարադատությունը չի կարող գործել բավարար արդյունավետ, եթե բոլոր սահմանադրական ինստիտուտների իրավական ակտերը, նրանց գործողություններն ու անգործությունը չլինեն սահմանադրական վերահսկողության առարկա, ինչպես նաև բոլոր Սահմանադրական ինստիտուտները ձեռք չբերեն սահմանադրական դատարան դիմելու իրավունքի սուբյեկտ:

Սույն հոդվածում նշված նոր ինստիտուտների կարևորության մասին վկայում է նաև ՀՀ նախագահի 2013 թվականի սեպտեմբերի 4-ի հրամանագրով [8] ձևավորված սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից ներկայացված Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգով: Սահմանադրության գերակայության շարունակական երաշխավորման խնդիրը, Սահմանադրությունը կյանքի կոչելը, հասարակական հարաբերությունների աստիճանական սահմանադրականացումը մեր երկրի այսօրվա ու ապագայի համար առաջնահերթ, գերագույն

կարևորության խնդիր է: Իսկ դրա համար անհրաժեշտ ու բավարար երաշխիքները պետք է ամրագրվեն բուն Սահմանադրությամբ: Ելակետը Սահմանադրության գերակայության և անմիջական գործողության երաշխավորումն է, հասարակական հարաբերությունների սահմանադրականացումը, Սահմանադրության, իրավական համակարգի ու իրավակիրառ պրակտիկայի միջև անհամապատասխանությունների հաղթահարումը: Վերջինիս ապահովման համար երկրում սահմանադրական օրինականության վիճակի և սահմանադրականության շարունակական ախտորոշումը (դիագնոստիկան) և մշտադիտարկումը (մոնիտորինգը) միջոց են հասարակական կյանքում օբյեկտիվ իրավիճակը գնահատելու և պետական իշխանության մարմինների գործառնական լիազորությունների արդյունավետ գործադրմամբ առկա անհամապատասխանությունները, բացերն ու տարաբնույթ ձևախեղումները հաղթահարելու համար [9]:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. [http://www.eurasialegal.info/index.php?option=com\\_content&view=article&id=4121%3A2014-11-26-13-38-01&catid=154%3A2012-10-04-03-50-06&Itemid=42&limitstart=1](http://www.eurasialegal.info/index.php?option=com_content&view=article&id=4121%3A2014-11-26-13-38-01&catid=154%3A2012-10-04-03-50-06&Itemid=42&limitstart=1)
2. Гегель Г. Энциклопедия философских наук. Т. 3. Философия духа. М.: Мысль., 1977. С. 351.
3. Вестник Конституционного Суда РА, № 3 (53) 2011.
4. 05.07.1995թ. Հայաստանի Հանրապետության սահմանադրության 49-րդ հոդված: <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=75780>
5. 12.01.1993թ. Ռուսաստանի Դաշնության սահմանադրության 80-րդ հոդված: <http://www.constitution.ru/10003000/10003000-6.htm>
6. 05.07.1995թ. Հայաստանի Հանրապետության սահմանադրության 111-րդ հոդված: <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=75780>
7. 05.07.1995թ. Հայաստանի Հանրապետության սահմանադրության 101-րդ հոդված: <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=75780>
8. ՀՀ նախագահի 2013 թվականի սեպտեմբերի 4-ի հրամանագիր թիվ ՆՀ-207-Ն: <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=91086>
9. Սահմանադրական բարեփոխումների մասնագիտացված հանձնաժողովի կողմից ներկայացված սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, 2014: <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/hayecakarg.pdf>

### РОЛЬ ИНСТИТУТА КОНСТИТУЦИОННОГО МОНИТОРИНГА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

*А.Г. Степанян*

#### АННОТАЦИЯ

Представленные в данной статье вопросы, как новая правовая категория, занимают ключевое место в науке конституционного права и практике. Указанные вопросы приобретают особую значимость в преддверии конституционных поправок.

**Ключевые слова:** мониторинг, конституционная юстиция, конституционный институт

**THE ROLE OF THE INSTITUTE OF CONSTITUTIONAL  
MONITORING IN THE REPUBLIC OF ARMENIA**

*A. Stepanyan*

**SUMMARY**

The issues, represented in the article as a new category of law, take a special role in the science of constitutional law and in practice. Stated issues get special importance in the framework of current constitutional reforms.

**Keywords:** monitoring, constitutional justice, constitutional institute.

# УГОЛОВНОЕ ПРАВО

## ПРОБЛЕМЫ ПРАВОВОЙ РЕГЛАМЕНТАЦИИ НЕОСТОРОЖНОГО СОПРИЧИНЕНИЯ ВРЕДА<sup>1</sup>

*С.С. Аветисян*

### АННОТАЦИЯ

В данной статье рассматриваются актуальные проблемы так называемого неосторожного сопричинения вреда, когда несколько лиц, действуя совместно, по неосторожности причиняют преступный вред. Предлагаются законодательные способы регламентации данного вопроса в контексте проекта нового УК РА. При этом выделяются характерные признаки неосторожного сопричинения, проводятся параллели между признаками соучастия.

**Ключевые слова:** соучастие, неосторожное сопричинение вреда, совместность, неосторожная деятельность, сопричинители, специальные правила поведения.

Неосторожное сопричинение вреда как уголовно-правовое явление представляет собой такую разновидность множественности участников преступлений, где несколько лиц совершают по неосторожности одно преступное деяние либо причиняют единый преступный результат.

Иначе говоря, совместность деяния может появиться не только при соучастии (умышленном совершении преступления), но и при неосторожном деянии. Следует отметить, что существует и третья разновидность совместного вреда. Это случаи совершения преступления с лицами, не имеющими признаков субъекта (недостижение возраста уголовной ответственности, невменяемость, отсутствие признаков специального субъекта).

Действующее понятие соучастия исключает возможность неосторожного сопричинения вреда (ст.37 УК РА, ст.37 УК РФ). Это правильный подход, поскольку соучастие возможно только в умышленных преступлениях. К сожалению, институт совместного совершения неосторожного преступления в нашем законодательстве не регламентирован. Проблема неосторожного сопричинения приобретает особую значимость в условиях научно-технического прогресса, возрастания технической оснащенности во всех сферах человеческой деятельности, где обслуживание невозможно без коллективной деятельности технического персонала. Поэтому вероятность ошибки, связанной с человеческим фактором при использовании техники, иных источников повышенной опасности, по объективным и субъективным причинам высокая.

---

<sup>1</sup>Статья публикуется в рамках научного проекта, финансируемого Министерством образования и науки РФ

Неосторожное сопричинение предполагает ответственность за общественно-опасный результат, находящийся в причинной связи с неосторожными действиями двух или более лиц.

Совместная неосторожная деятельность и соучастие – это не тождественные явления, хотя имеют ряд общих признаков. Неосторожное сопричинение находится за пределами соучастия, они противоположны по своему социальному значению [1. С. 52].

Объективные и субъективные свойства неосторожного сопричинения подробно излагаются в работах Д.А. Безбородова, посвященных методологическим и уголовно-правовым основам учения об уголовной ответственности за совместное преступное деяние [2].

При рассмотрении проблемы неосторожного сопричинения вреда следует учитывать следующие обстоятельства. Действия сопричинителей могут входить в объективную сторону преступления, но возможны случаи, когда их действия находятся за пределами объективной стороны. Например, человек склоняет водителя нарушить правила дорожного движения (превысить скорость, проехать на красный свет и т.п.).

Кроме того, неосторожное сопричинение возможно как при наличии двусторонней субъективной связи между субъектами по поводу совершения преступления, так и при отсутствии какой бы то ни было субъективной связи между сопричинителями по поводу причиненного вреда. Такая ситуация возможна, когда действия (бездействие) одного сопричинителя никак не обуславливают деяние второго лица. Они действуют автономно, но будучи при этом, например, ответственными за разные части (этапы) в обеспечении, например, технической безопасности, становятся сопричинителями последствий единых для них обоих, которые могли бы не наступить в том случае, если хотя бы один из них выполнил свои обязанности [3. С. 101].

Следует заметить, что при наличии двусторонней субъективной связи между субъектами при неосторожном сопричинении имеется сходство с объективными признаками соучастия.

Это можно продемонстрировать на примере уголовно-правовых норм, устанавливающих ответственность за нарушение специальных правил, допущенных умышленно или по неосторожности (в отношении последствия – только неосторожность).

В вышеприведенном примере (лицо подстрекает водителя нарушить правила дорожного движения), в случае наступления последствий в результате этого нарушения, нет оснований сомневаться, что в отношении последствий данное лицо действовало с косвенным умыслом. Поэтому предлагается в соответствующих нормах ответственность за нарушение специальных правил дифференцировать с учетом субъективного отношения к деянию-нарушению и последствиям – как неосторожной формы, так и косвенного умысла. Данный законодательный подход можно распространить на составы нарушений правил дорожно-



го движения, экологические преступления, преступления против интересов военной службы и другие специальные составы преступлений.

В ст.54 проекта нового УК РА сделана попытка закрепления неосторожного сопричинения в следующей редакции:

*«Если двое или более лиц совместно совершают деяние, повлекшее последнее, являющееся признаком преступления, совершенного по неосторожности, то подлежат ответственности как исполнители, независимо от того, вследствие чьих действий наступили последствия»* [4. С. 46].

Предложенное определение имеет ряд существенных недостатков.

Во-первых, признак совместности нуждается в уточнении. Совместность означает наличие взаимосвязанных или взаимообусловленных противоправных действий. При этом преступный результат наступает по той причине, что два или более субъекта действовали совместно в направлении, породившем результат или не предотвратившем его наступление. Усилия данных лиц объединены для достижения или социально полезного, или, по крайней мере, социально-нейтрального результата. В совместном сопричинении главное состоит в том, чтобы действия (бездействие) сопричинителей по своей направленности, содержанию находились во взаимодействии. Именно это обстоятельство позволяет содеянное рассматривать как единое неосторожное преступление.

Во-вторых, субъективные свойства неосторожного сопричинения должны включать осознание совместного характера социально-полезной, социально нейтральной или, как отмечает Д.А. Безбородов, – максимум предосудительной деятельности. При этом характер предвидения наступления побочных последствий деяния этих лиц находится на минимальном уровне и ограничивается либо преступным легкомыслием, либо преступной небрежностью [5. С. 40].

В-третьих, неосторожное сопричинение возможно не только в неосторожных деяниях, но и в случаях, когда общественно опасное деяние может совершаться как умышленно, так и по неосторожности (отметим, что речь идет не о преступлениях с двумя формами, поскольку в соответствии со ст.32 УК РА и ст. 27 УК РФ к числу таких деяний относятся только те, которые совершаются умышленно) [6. С. 201].

На основании изложенного, предлагается:

1) В уголовных кодексах Армении и России закрепить понятие неосторожного сопричинения вреда с учетом отмеченных особенностей.

2) Установить положение о том, что при назначении наказания каждому из участников неосторожного сопричинения вреда учитываются роль каждого из них и значение его деяния для причинения общественно опасных последствий.

3) В уголовно-правовых нормах, устанавливающих ответственность за нарушение специальных правил поведения, ответственность дифференцировать с учетом форм вины по отношению к деянию: за неосторожное и отдельно – за умышленное нарушение правил поведения, повлекшее по неосторожности предусмотренный законом вред.

Данный подход соответствует справедливости и другим принципам уголовного закона и повысит ответственность лиц, совершающих преступления.

#### ЛИТЕРАТУРА

1. *Нерсесян В.А.* Неосторожная вина (в условиях научно-технической революции). М., 1988.
2. *Безбородов Д.А.* Методологические основы учения об уголовной ответственности за совместные преступные деяния. Автореферат докт. дисс., М., 2009.
3. *Молчанов Д.М.* Актуальные проблемы уголовного права. Общая часть. Уч. пособие / Отв.ред А.И. Рапог. М., «Проспект», 2015.
4. Проект нового уголовного кодекса Республики Армения. Ер., 2015.
5. *Безбородов Д.А.* Указ. соч.
6. *Аветисян С.С.* Приоритеты и перспективы нового УК РА (социально-правовая концепция) Ер: Изд-во РАУ, 2012.

#### ISSUES OF LEGAL REGULATION OF NEGLIGENT CO-INFLICTION OF DAMAGE

*S. Avetisyan*

#### SUMMARY

In the scientific article, the relevant problems are studied of the so called “negligent co-infliction of damage”, which takes place, when several individuals acting jointly, negligently cause criminal damage. Legislative means of regulation are presented regarding the stated issue, in the context of the new draft of the Criminal Code of RA. Herewith, the characteristic features of negligent co-infliction are highlighted and parallels are drawn between the features of complicity.

**Keywords:** complicity, negligent co-infliction of damage, joint action, negligent action, co-inflictors, special rules of behavior.

#### ԱՆՁԳՈՒՇՈՒԹՅԱՄԲ ՎՆԱՍ ՀԱՄԱՊԱՏՃԱՌԵԼՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

*Ս.Ս. Ավետիսյան*

#### ԱՍՓՈՓՈՒՄ

Հնդվածում քննարկվում է անզգուշությամբ հանցանքի համակատարման և համապատճառման իրավիճակները, այլ խոսքով այն դեպքերը, երբ մի քանի անձանց համատեղ անզգուշ արարքի հետևանքով առաջանում է հանցավոր վնաս: ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի համատեքստում առաջարկվում են տվյալ հիմնահարցի օրենսդրական լուծումներ:

Բացի այդ տարբերակվում են համապատճառման և հանցակցության հատկանիշների առանձնահատկությունները:

**Հիմնաբառեր՝** հանցակցություն, անզգուշությամբ հանցանքի համակատարում, համատեղություն, անզգուշ գործունեություն, համապատճառողներ, վարքագծի հատուկ կանոններ:

**ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՄԱՐ**

**Ա.Ժ. Այվազյան**

**ԱՄՓՈՓՈՒՄ**

Հոդվածում ներկայացված է առևտրային կաշառքի /ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդված/ և դրա տարատեսակներից մեկի՝ արհեստավարժ մարգարեցումների և հանդիսադիր առևտրային մրցույթների մասնակիցներին ու կազմակերպիչներին կաշառելու /քր. օր.-ի 201-րդ հոդված/բնութագիրը: Քրեական օրենսդրության հիմնարար սկզբունքներից մեկի՝ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի պահանջներն ապահովելու նպատակով առաջարկ է կատարվել այդ հանցագործությունների դիսպոզիցիաներում կատարել փոփոխություններ՝ միաժամանակ ներկայացվելով քր. օր.-ի 201-րդ հոդվածն ընդհանրապես վերացնելու անհրաժեշտությունը: Անդրադարձ է կատարվել ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածով նախատեսված խրախուսական նորմի վերաձևակերպմանը և այդ տեսանկյունից առաջ են քաշվել նոր մոտեցումներ: Օտարերկրյա պետությունների օրենսդրության համեմատությամբ կատարվել են իրավահամեմատական վերլուծություններ, ի հայտ են բերվել օրենսդրական ամրագրման տարբերությունները, որոնք առանձին վերլուծվել են և հայտնվել դրանց շուրջ կարծիքներ՝ տալով իրավական մեկնաբանություններ և հիմնավորումներ:

**Հիմնաբառեր**՝ ձևական հանցակազմ, խրախուսական նորմ, առևտրային կաշառք, հիմնարար սկզբունք, եռօրյա ժամկետ:

ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածը վերաբերում է առևտրային կաշառքին և շարադրված է հետևյալ բովանդակությամբ. առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողին, արբիտրին, այդ թվում՝ օտարերկրյա պետության՝ արբիտրաժի մասին օրենսդրությանը համապատասխան գործառույթներ իրականացնող արբիտրին, աուդիտորին կամ փաստաբանին կաշառք տալը, այսինքն՝ ապօրինաբար այդ անձանց անձամբ կամ միջնորդի միջոցով նրանց կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն խոստանալը կամ առաջարկելը կամ տրամադրելը՝ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին գործողություններ կատարելու կամ չկատարելու համար:

Նշված հանցագործության անմիջական օբյեկտն առևտրային կամ այլ կազմակերպությունների օրինական գործունեության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Հանցագործության առար-

կա կարող է լինել ինչպես գույքը (թե շրջանառության մեջ գտնվող և թե շրջանառությունից հանված), այնպես էլ գույքային իրավունքը, գույքային բնույթի ծառայությունները, որևէ այլ առավելությունը: 200-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ինչպես առևտրային կաշառք տալու (1-ին և 2-րդ մասեր), այնպես էլ ստանալու (3-րդ և 4-րդ մասեր) համար: Նշված հոդվածի առաջին մասով նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմը բնութագրվում է հետևյալ գործողություններով. առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողին, արբիտրին՝ այդ թվում օտարերկրյա պետության արբիտրաժի մասին օրենսդրությանը համապատասխան գործառույթներ իրականացնող արբիտրին, աուդիտորին կամ փաստաբանին անձամբ կամ միջոնորդի միջոցով նրանց կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն խոստանալը կամ առաջարկելը կամ տրամադրելը՝ կաշառք տվողի կամ նրաներկայացրած անձի օգտին գործողություններ կատարելու կամ չկատարելու համար: Ընդ որում, արարքի որակման համար նշանակություն չունի, թե կաշառքը երբ է տրվել՝ համապատասխան գործողություն (անգործություն) կատարելուց առաջ, թե հետո: Սակայն վերջին դեպքում անհրաժեշտ է, որ այդպիսի գործողություն (անգործություն) կատարելուն նախորդի կաշառքի վերաբերյալ կաշառատուի և կաշառք ստացողի նախնական պայմանավորվածությունը: Արարքի որակման համար նշանակություն չունի նաև, թե կաշառքը տրվել է անմիջականորեն, թե նրանց գիտությամբ և համաձայնությամբ՝ մեկ այլ անձի: Առևտրային կաշառք տրամադրելն ավարտված է համարվում կաշառքի առարկան համապատասխան ծառայողի, արբիտրի, աուդիտորի, փաստաբանի կամ նրանց գիտությամբ ու համաձայնությամբ այլ անձի կողմից ընդունելու պահից: Ինչ վերաբերվում է առևտրային կաշառք խոստանալուն կամ առաջարկելուն, ապա այս դեպքերում հանցագործությունն ավարտված է համարվում խոստանալու կամ առաջարկելու պահից՝ անկախ նրանից, թե դրա մասին համաձայնություն կայացվել է, թե ոչ: Մենք գտնում ենք, որ առևտրային կաշառքի զուտ խոստանալու կամ առաջարկելու պահից հանցագործությունն ավարտված համարելը այդքան էլ չի բխում քրեական օրենսդրության հիմնարար սկզբունքներից մեկի՝ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի պահանջներից: Մասնավորապես ՀՀ քր. օր.-ի 10-րդ հոդվածն այդ սկզբունքն ամրագրելով սահմանում է, որ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար: Տվյալ պարագայում, սույն հանցագործության առարկան արդեն իսկ «հասցեատիրոջը» փոխանցված լինելն ու զուտ դրա խոստանալը կամ առաջարկելը քրեական պատասխանատվության առումով նույն հա-

րթությունում դիտելը, մեղմ ասած, արդար չէ՝ առավել ևս մի խումբ քրեագետների կողմից մատնանշված հանգամանքում, այն է՝ անկախ նրանից, թե դրա մասին համաձայնություն կողմերի միջև, ի վերջո, կայացվել է, թե ոչ: Կարծում ենք, որ հանցագործության առարկայի խոստանալը կամ առաջարկելը, եթե այն բացահայտվել է տվյալ փուլում, ապա այդ արարքն, ըստ էության, իրենից ներկայացնում է կաշառք տրամադրելու նախապատրաստություն և պետք է հանգեցնի ավելի մեղմ պատժի, քան կաշառքի բուն տրամադրումը: Սակայն հաշվի առնելով, որ առևտրային կաշառք տալը դասվում է ոչ մեծ ծանրության հանցագործությունների շարքում, ապա դրա նախապատրաստությունը քրեորեն պատժելի չէ: Բացի այդ, Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի 1999թ.-ի կոնվենցիան [1] և ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ 2003թ.-ի կոնվենցիան [2] նախատեսում են, որ կաշառք խոստանալն ու առաջարկելը, որպես ինքնուրույն կոռուպցիոն հանցագործություն, պետք է առանձին քրեականացվեն, այլ ոչ թե հանդիսանան կաշառք տրամադրելու նախապատրաստություն: Ուստի, ելնելով վերոգրյալից, կարծում և առաջարկում ենք, որ հանցագործության առարկայի խոստանալը կամ առաջարկելը, եթե այն բացահայտվել է տվյալ փուլում, պետք է նախատեսվի որպես առանձին հանցագործություն՝ ՀՀ քր. օր.-ի 200.1 հոդվածով, ավելի մեղմ պատիժ սահմանելով: Այսպիսի մոտեցումը մի կողմից չի հակասի կոնվենցիոնալ դրույթներին, մյուս կողմից թույլ կտա օրենսդրական մակարդակում կենսագործել արդարության սկզբունքի պահանջները: Այս դեպքում միայն պատիժ կիրառելիս կապահովվի նաև ՀՀ քր. օր.-ի 48-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված պատժի նպատակներից մեկի՝ սոցիալական արդարության վերականգնման իրագործումը:

ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածի 3-րդ մասը պատասխանատվություն է սահմանում նույն հոդվածի առաջին մասում նախատեսված արարքի հակառակ վիճակի համար: Առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողի հասկացությունը սահմանված է քր. օր.-ի 200-րդ հոդվածի 5-րդ մասում: Նման ծառայող է հանդիսանում այն անձը, ով մշտապես, ժամանակավորապես կամ հատուկ լիազորությամբ իրականացնում է կարգադրիչ կամ այլ կառավարչական գործառույթներ կամ զբաղեցնում է ցանկացած այլ պաշտոն առևտրային կազմակերպություններում՝ անկախ սեփականության ձևից, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հիմնարկներ չհամարվող ոչ առևտրային կազմակերպություններում: Նշված հոդվածի այդ նույն՝ 5-րդ մասը միաժամանակ նախատեսում է նաև այն պայմանները, որոնց առկայության դեպքում առևտրային կաշառք տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից: Մասնավորապես առևտրային կաշառք տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե տեղի է ունեցել կաշառքի շորթում, և այդ անձը մինչև կաշառք տալու մասին քրեական հետապնդման մարմիններին հայտնի դառնալը, բայց հանցանքի

կատարումից հետո՝ ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում, այդ մասին կամովին հայտնել է քրեական հետապնդման մարմիններին և աջակցել հանցագործությունը բացահայտելուն: Գտնում ենք, որ քրեական պատասխանատվությունից ազատվելու համար նման ժամկետ սահմանելն այդքան էլ ճիշտ և ռացիոնալ չէ, քանզի գործնականում հնարավոր են դեպքեր, երբ անձն ուղղակի առաջացած ֆիզիկական կամ տեխնիկական խնդիրներով պայմանավորված չկարողանա սահմանված ժամկետում հասցնել և կատարվածի մասին հայտնել քրեական հետապնդման մարմիններին: Բացի այդ, հնարավոր են նաև դեպքեր, երբ հանցագործության մասին իրենք՝ քրեական հետապնդման մարմնի աշխատակիցները տեղեկացվեն և վարույթ իրականացնեն դեպքից բավականին ուշ ժամանակահատվածում: Տվյալ դեպքում, եթե վարույթն իրականացնող մարմինը ոչ մի տվյալ և ապացույց չունի հանցագործությունը բացահայտելու և մեղավորներին հայտնաբերելու համար, ապա որքանով ճիշտ ու արդարացի կլինի կաշառք տվող անձին քրեական պատասխանատվության ենթարկելն ու նրա նկատմամբ այս խրախուսական նորմը չկիրառելը, եթե նա հենց այդ ժամանակաընթացքում որոշի ներկայանալ և տեղի ունեցածի վերաբերյալ հայտնել քրեական հետապնդման մարմիններին: «Քրեական հետապնդման մարմիններին» մասով ևս հայտնենք մեր մտահոգությունը: Կարծում ենք, որ նման խոստովանությունը բավարար պետք է համարվի ոչ միայն քրեական հետապնդման մարմիններին հայտնելու դեպքում, այլև ցանկացած այլ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին հայտնելով (օրինակ, գյուղական համայնքի ղեկավարին հայտնելով), միայն թե անձը գործի գիտակցված, որ նա դա անում է հանցագործության մասին ուղղակի հայտնելու և այն բացահայտված լինելու նպատակով, այլ ոչ թե միամտաբար: Կարծում ենք, որ օրենսդիրը խրախուսական նորմ սահմանելով հանդերձ միաժամանակ չափազանց խիստ ու շատ պահանջներ է դնում այն առումով, որ նշված խրախուսական նորմը կաշառք տված անձի նկատմամբ կիրառելու համար անհրաժեշտ է, որ միանգամից ու միաժամանակ առկա լինեն այդ նորմով ամրագրված մի շարք պարտադիր պայմաններ: Այստեղ տեղին հարց է առաջանում. ինչպես վարվել այն դեպքում, երբ օրինակ կաշառք տված անձը համապատասխան պահանջված ժամկետում կամովին հայտնել է այդ մասին քրեական հետապնդման մարմիններին՝ մինչև նրանց կողմից այդ դեպքի մասին տեղեկանալը, այնուհետև աջակցել է հանցագործության բացահայտմանը, սակայն, այդուհանդերձ, կաշառքի շորթում տեղի չի ունեցել: Կարծում ենք, որ նշված հանցագործությունների բացահայտման շահերից ելնելով օրենսդիրը որոշ չափով պետք է վերանայի ու մեղմի իր պահանջած պայմանները: Նման օրենսդրական կարգավորումը, մեղմ ասած, չի բխում կոռուպցիայի կանխարգելման խնդիրներից: Այսպես, եթե առևտրային ծառայողը չի շորթել կաշառքը և կաշառք տվողն ինքն է իր նախաձեռնությամբ տվել կամ առաջարկել, ապա առևտրային ծառայողը

կարող է հանգիստ խղճով վերցնել կաշառքը՝ լավ հասկանալով, որ կաշառք տվողը չունի քրեական պատասխանատվությունից ազատվելու հնարավորություն, ուստի և այդ մասին չի հայտնի իրավասու մարմիններին:

Քննարկվող հանցագործության առումով ՌԴ օրենսդիր մարմինն այլ կառուցվածքային մոտեցում է ցուցաբերել: ՌԴ քր. օր.-ում առկա է առանձին՝ թիվ 23-րդ գլուխը, որը վերաբերվում է առևտրային և այլ կազմակերպությունների ծառայության շահերի դեմ ուղղված հանցագործություններին: ՌԴ քր. օր.-ում առևտրային կաշառքը, ի տարբերություն մեր հայրենական օրենսդրության, ընդգրկված է ոչ թե տնտեսական գործունեության, այլ հենց նշված շահերի դեմ ուղղված հանցագործությունների շարքում (հոդված 204) [3]: Դիսպոզիցիայի առումով ռուսական տարբերակը գրեթե նույնն է, սակայն այստեղ, որպես օբյեկտիվ կողմի դրսևորման տարբերակներ, բացակայում են հանցագործության առարկան խոստանալու կամ առաջարկելու հանգամանքները, ինչը մեր կարծիքով արդար մոտեցում է: Տարբերություն կա նաև խրախուսական նորմի առումով: Նշված հոդվածը ամրագրում է, որ առևտրային կաշառք տվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե ակտիվորեն նպաստել է հանցագործության բացահայտմանը և (կամ) դրա քննությանը կամ իր նկատմամբ տեղի է ունեցել կաշառքի շորթում, կամ այդ անձն ինքնակամ կաշառքի մասին հայտնել է քրեական գործ հարուցելու իրավասություն ունեցող մարմնին: Ինչպես տեսնում ենք, ՌԴ քր. օր.-ը չի պահանջում, որպեսզի միանգամից ու միաժամանակ առկա լինեն այդ խրախուսական նորմով ամրագրված բոլոր պայմանները: Բացի այդ, նախատեսված չէ նաև եռօրյա կամ այլ որևէ ժամկետ: Սակայն այստեղ էլ տարակուսանք կարելի է հայտնել այն առումով, որ ոչ բոլորը, եթե ոչ մեծամասնությունը, կարող են տեղեկացված լինեն, թե պետական այդ որ մարմինն է իրավասու առևտրային կաշառքի վերաբերյալ հարուցել քրեական գործ:

Լատվիայի քր. օր.-ի 199-րդ հոդվածը[4] և Բելառուսի քր. օր.-ի 252-րդ հոդվածը [5] քննարկվող հանցագործության հետ կապված որևէ խրախուսական նորմ չեն նախատեսում:

ՀՀ քր. օր.-ի 201-րդ հոդվածը վերաբերվում է արհեստավարժ մարգամրցումների և հանդիսադիր առևտրային մրցույթների մասնակիցներին ու կազմակերպիչներին կաշառելուն և շարադրված է հետևյալ բովանդակությամբ. մարզիկներին, մրցավարներին, մարզիչներին, թիմերի ղեկավարներին կամ արհեստավարժ մարգամրցումների մյուս մասնակիցներին ու կազմակերպիչներին, ինչպես նաև հանդիսավոր առևտրային մրցույթների կազմակերպիչներին ու մրցանակաբաշխային հանձնաժողովի անդամներին կաշառք տալը, այսինքն՝ ապօրինաբար այդ անձանց անձամբ կամ միջնորդի միջոցով նրանց կամ որևէ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն խոստանալը կամ առաջարկելը կամ տրամադրելը՝ այդ մրցումների կամ մրցույթների ար-

դյունքների վրա ազդելու նպատակով: Տվյալ հանցագործությունը առևտրային կաշառքի հատուկ տարատեսակ է, իրավամբ կարելի է ասել, որ այն համարվում է առևտրային կաշառքի դրսևորման ձևերից մեկը, ուստի, մեր կարծիքով, աննպատակահարմար է «առավելություն տալ» և առանձին հոդվածային կարգով անդրադառնալ առևտրային կաշառքի այս կամ այն կոնկրետ դրսևորման ձևին, քանի որ այդ նույն կերպ ու տրամաբանությամբ կարելի է քր. օր-ի տարբեր հոդվածներում ամրագրված մի շարք այլ հանցագործություններ ևս տրոհել դրանց առանձին դրսևորման տարբերակներով ու այդպես քր. օր-ը ծանրաբեռնել նմանատիպ «երկրորդական, ածանցյալ» հոդվածներով՝ թերևս դրանց ինքնուրույնությունն ընդգծելու նպատակով դիսպոզիցիայում առանձին ինչ-որ հատկանիշ ներառելով: Ինչևէ, ամեն դեպքում օրենսդիր մարմինը քր. օր.-ի 201-րդ հոդվածում նախատեսել է այն, որի հետ կապված մեր կողմից արված մի շարք դիտարկումները նույնն են, ինչ առևտրային կաշառքի դեպքում: Նման հանցակազմերի գոյությունը, մեր կարծիքով, քր. օր.-ում ստեղծում է քրեաիրավական նորմերի արհեստական մրցակցություն և հարուցում արարքի որակման քրեաիրավական խնդիրներ:

Հանցագործության անմիջական օբյեկտը արհեստավարժ մարգամրցումների և հանդիսադիր առևտրային մրցույթների (գեղեցկության մրցույթների, կինոյի կամ երգի փառատոնների և այլն) անցկացման սահմանված կարգի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Մրցումները հանդիսանում են արհեստավարժ (պրոֆեսիոնալ) միայն այն դեպքում, երբ դրանք սահմանված կարգով անցկացվում են համապատասխան սպորտային կազմակերպությունների կողմից և նախապես հայտարարվում են որպես այդպիսիք: Սպորտը համարվում է արհեստավարժ, եթե դրանով զբաղվողի համար այն աշխատանքային գործունեություն է և համարվում է եկամուտների հիմնական աղբյուր: Առևտրային են համարվում հանդիսադիր այն մրցույթները, որոնք կազմակերպվում և անցկացվում են որոշակի եկամուտներ ստանալու համար: Մույն հանցագործության առարկան նյութական արժեքները, գույքային բնույթի ծառայություններն են կամ որևէ այլ առավելությունը:

Հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմը բնութագրվում է մարզիկներին, մրցավարներին, մարզիչներին, թիմերի ղեկավարներին, կազմակերպիչներին և արհեստավարժ մարգամրցումների մյուս մասնակիցներին, ինչպես նաև հանդիսավոր առևտրային մրցույթների կազմակերպիչներին և մրցանակաբախշային հանձնաժողովի անդամներին կաշառելով (կաշառք տալով), այսինքն՝ դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն խոստանալով, առաջարկելով կամ տրամադրելով, որը կատարվում է այդ մրցումների կամ մրցույթների արդյունքների վրա ազդելու նպատակով: Հատկանշական է, որ սույն հոդվածի վերնագրում օրենսդիրը նշել է «հանդիսադիր առևտրային մրցույթներ», իսկ հոդվածի դիսպոզի-



ցիայում՝ «հանդիսավոր առևտրային մրցույթներ» բառերը: Կարծում ենք, որ անհամապատասխանությունը պետք է շտկվի: Ընդ որում, մեր կարծիքով վերնագրում «նշված հանդիսադիր» բառը պետք է փոխարինվի «հանդիսավոր» բառով, քանի որ հանդիսադիր նշանակում է հանդեսի կազմակերպիչ, հանդեսը կառավարող, իսկ հանդիսավոր նշանակում է հանդեսով կատարվող, հանդեսին հատուկ, նշանավոր, մեծաշուք [6], ուստի քերականական, իմաստային և տրամաբանական տեսանկյուններից պետք է արձանագրել, որ այստեղ ճիշտ տարբերակը հենց «հանդիսավոր» բառն է:

Նշված հանցագործությունն ավարտված է համարվում նշված սուբյեկտների կաշառք խոստանալու, առաջարկելու կամ տրամադրելու պահից: Ընդ որում, արարքի որակման համար նշանակություն չունի, թե կաշառքը տրվել է նախապես, թե որոշակի պայմանավորվածությունը կատարելուց հետո: Կարևորն այն է, որ այն տրվել է դիսպոզիցիայում նշված նպատակով: Բայց այս դեպքում ևս կաշառք խոստանալու կամ առաջարկելու մասով հանցանքն ավարտված համարվելու վերաբերյալ մենք ունենք նույն մտահոգությունը, ինչ բուն առևտրային կաշառքի դեպքում:

Մի խումբ քրեագետներ կարծիք են հայտնում, որ այն դեպքում, երբ մարզիկը, մրցավարը, մարզիչը, թիմի ղեկավարը, արհեստավարժ մարզամրցումների կազմակերպիչը, մյուս մասնակիցները կամ հանդիսավոր առևտրային մրցույթի կազմակերպիչը կամ մրցանակաբաշխային հանձնաժողովի անդամը հրաժարվում են ընդունել տրված կաշառքը կամ համաձայնության չեն գալիս, ապա կաշառատուի արարքը պետք է որակվի որպես հանցափորձ: Այս առումով մեր մտահոգությունը պետք է հայտնենք հետևյալ տեսանկյունից. քր. օր-ի 201-րդ հոդվածի դիսպոզիցիայում, որպես ձևական հանցակազմ, օբյեկտիվ կողմի այլընտրանքային դրսևորումների մեջ շատ պարզ ու իմպերատիվ կերպով նշված է նաև կաշառքի առարկան խոստանալը կամ առաջարկելը՝ առանց որևէ արդյունք կամ հետևանք մատնանշելու: Դա նշանակում է, որ կաշառքի առարկան խոստանալու կամ առաջարկելու պահից հանցանքն արդեն իսկ ավարտված է համարվում և այստեղ այլևս էական չէ կողմերի համաձայնության գալը կամ չգալը: Իրավամբ քր. օր.-ի 200-րդ և 201-րդ հոդվածների իմաստով համաձայնության չգալու պարագայում խոստանալու կամ առաջարկելու դեպքերը արդարացիորեն իրոք պետք է համարել որպես տվյալ հանցագործությունների փորձ, սակայն, ինչպես ասում են, ունենք այն, ինչ ունենք և որպեսզի, ի վերջո, օրինական համարվի մեր առաջարկած տեսակետը, անհրաժեշտ է նախ համապատասխան օրենսդրական ձևափոխում մտցնել ՀՀ քր. օր.-ի 200-րդ և 201-րդ հոդվածների դիսպոզիցիաներում՝ օբյեկտիվ կողմի այլընտրանքային դրսևորման տարբերակներից հանելով «խոստանալ կամ առաջարկել» արտահայտությունները և դրանք, ինչպես արդեն նշվեց, նախատեսել առանձին հանցակազմի տեսքով՝ սահմանելով ավելի մեղմ պատիժ:

Համապատասխան վարձատրություններ խոստանալը կամ դրանք տալը քրեորեն հետապնդելի չի համարվում, եթե դա արվում է հիշյալ անձանց լավ աշխատանքը պարզապես օբյեկտիվորեն, առանց որևէ խարդավանքի, բնականոն ձևով խթանելու և խրախուսելու նպատակով: ՀՀ քր. օր.-ի 201-րդ հոդվածի 3-րդ մասը պատասխանատվություն է սահմանում նույն հոդվածի առաջին մասում նախատեսված արարքի հակառակ վիճակի համար, որտեղ կրկին մեր նույն դիտարկումներն ենք ներկայացնում:

Եվ քանի որ այս հանցագործությունը համարվում է առևտրային կաշառքի յուրօրինակ դրսևորում, ապա զարմանալի է, որ օրենսդիրն այստեղ չի ամրագրում խրախուսական նորմ այն անձանց համար, ովքեր կամովին կհայտնեն վերոհիշյալ սուբյեկտներին կաշառք տալու մասին:

ՌԴ քր. օր.-ի 184-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում, ինչպես որ մենք ենք բարձրաձայնում, հանցակազմի օբյեկտիվ կողմում չկան «խոստանալ կամ առաջարկել» արտահայտությունները: Հոդվածի 3-րդ մասը, որպես հանցագործության հակառակ վիճակ, առանձին կարգով է ամրագրում մարզիկների կողմից կաշառք ստանալը, իսկ հոդվածի 4-րդ մասում նշված են մյուս հատուկ սուբյեկտները: Հատուկ սուբյեկտների դեպքում ևս բացակայում են «խոստանալ կամ առաջարկել» արտահայտությունները: Ի տարբերություն հայրենական օրենսդրության, ՌԴ քր. օր.-ի 184-րդ հոդվածի 4-րդ մասում կաշառք տվող անձի համար խրախուսական նորմը նախատեսված է:

Քննարկվող հանցագործության առումով բավականին «համեստ» մոտեցում է ցուցաբերված Բելառուսի քր. օր.-ում: Մասնավորապես 253-րդ հոդվածուի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում միայն վերոհիշյալ հատուկ սուբյեկտների կողմից կաշառք ստանալու համար, իսկ 2-րդ մասը, որպես ծանրացուցիչ հանգամանք նախատեսում է միայն հանցանքը կրկին անգամ կատարելը: Այսինքն խոսք չկա ոչ հատուկ սուբյեկտներին կաշառք տալու և ոչ էլ խրախուսական նորմի մասին: Հատկանշական է, որ այստեղ ևս բացակայում են «խոստանալ կամ առաջարկել» արտահայտությունները:

Կարծում ենք, որ հոդվածում ներկայացված առաջարկությունների կենսագործումը կապահովի արդարության սկզբունքի իրացումը, կպարզեցնի նշված արարքների որակման գործընթացը և, վերջին հաշվով, կնպաստի մասնավոր հատվածում կոռուպցիայի կանխարգելման իրավական հիմքերի կատարելագործմանը:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Եվրոպայի խորհրդի 1999թ. հունվարի 27-ի «Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի» Կոնվենցիայի 7-րդ և 8-րդ հոդվածներ:
2. ՄԱԿ-ի 2003թ. Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 21-րդ հոդված:
3. <http://base.garant.ru/10108000/>
4. <http://law.edu.ru/norm/norm.asp?normID=12434245>.

5. [http://etalonline.by/?type=text&regnum=HK9900275#load\\_text\\_none\\_1\\_](http://etalonline.by/?type=text&regnum=HK9900275#load_text_none_1_)
6. Ժամանակակից Հայոց Լեզվի Բացատրական Բառարան: Հրայրա Աճառյանի Անվան Լեզվի Ինստիտուտ: Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Հրատարակչություն, Եր., 1974թ.:

## УГОЛОВНАЯ ОТВЕТСТВЕННОСТЬ ЗА КОРРУПЦИОННЫЕ ПРЕСТУПЛЕНИЯ ЭКОНОМИЧЕСКОЙ НАПРАВЛЕННОСТИ

*А.Ж. Айвазян*

### АННОТАЦИЯ

В данной статье представлена характеристика коммерческой взятки (УК РА статья 200) и характеристика одной из ее разновидностей – коррупция участников и организаторов профессиональных спортивных соревнований и показательных коммерческих конкурсов (УК статья 201). С целью обеспечения требований одного из основополагающих принципов уголовного законодательства – принципа индивидуализации справедливости и ответственности – было предложено осуществить изменения в диспозициях этих преступлений, в то же время представляя необходимость устранения полностью статьи 201 УК. Была затронута переформулировка поощрительной нормы, предусмотренная 200-й статьёй УК и с этой точки зрения были выдвинуты новые подходы. По сравнению с законодательством иностранных государств, были проведены правовые-сравнительные анализы, выявлены различия в законодательном закреплении, которые были отдельно проанализированы и сообщены мнения о них с правовыми комментариями и обоснованиями.

**Ключевые слова:** формальный состав преступления, поощрительная норма, коммерческая взятка, основополагающий принцип, трехдневных срок,

## THE CRIMINAL RESPONSIBILITY FOR CORRUPTION CRIMES IN THE ECONOMICS PHERE

*A. Ayvazyan*

### SUMMARY

The description of trade bribe (article 200 of the RA Criminal Code) and one of its varieties, i.e. bribing the professional sport competitions and trade competitions participants and organizers (article 201 of the RA Criminal Code) has been presented in the article. With the purpose of the provision of the requirements of one of the core principles of the criminal legislation, i.e. the principle of the individualization of justice and responsibility, a suggestion has been made that the amendments should be introduced in the disposition of these crimes. At the same time, the necessity of the complete abolition of article 201 of the RA Criminal Code has been presented.

The issues of the reformation of the encouraging norm foreseen by article 200 of the RA Criminal Code has been discussed in the article, and new approaches have been advanced from that point of view. Legal-comparative analyses have been conducted in the article, bringing comparisons with the legislations of the foreign states, the differences of the legislative stipulations have been discovered and separately analyzed.

Opinions around these issues have been formed and presented, bringing the corresponding legal comments and substantiations.

**Keywords:** the formal corpus delicti, encouraging norm, the trade bribe, the core principle, the three-day deadline.

## АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ ОСВОБОЖДЕНИЯ ОТ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ЗА ВЗЯТОЧНИЧЕСТВО В СВЯЗИ С ДОБРОВОЛЬНЫМ СООБЩЕНИЕМ (В СВЕТЕ ПОСЛЕДНИХ ИЗМЕНЕНИЙ УГОЛОВНОГО ЗАКОНОДАТЕЛЬСТВА РА)

*С.Ш. Цагикян, А.В. Акопян*

### АННОТАЦИЯ

В данной статье рассматривается краткий анализ развития законодательства об освобождении от уголовной ответственности за взяточничество, проблемы освобождения от уголовной ответственности за взяточничество ввиду последних изменений уголовного законодательства РА.

**Ключевые слова:** взяточничество, сравнительный анализ, ответственность, взятополучатель, освобождение от уголовной ответственности.

Тема данной научной работы посвящена освобождению взяткодателя от уголовной ответственности в связи с добровольным сообщением о даче взятки. Как известно, взяточничество является наиболее распространённой и опасной формой коррупции, которая является лидером среди преступлений по степени латентности. И в целях более эффективной борьбы со взяточничеством и повышения раскрываемости данной категории преступлений, законодатель, в качестве поощрительной нормы, предусмотрел основания освобождения взяткодателя от уголовной ответственности [1].

Часть 4 ст. 312 УК РА содержит поощрительную норму об освобождении взяткодателя от уголовной ответственности за дачу взятки. Необходимо отметить, что законом от 16 мая 2014 года «О внесении изменений в уголовный кодекс РА» данная поощрительная норма подверглась изменению. Так, до принятия вышеуказанного закона содержание поощрительной нормы было таковым: «Взяткодатель освобождается от уголовной ответственности, если имело место вымогательство взятки, либо если данное лицо не позднее трех дней после совершения преступления добровольно сообщило о даче взятки в правоохранительные органы». Действующая норма имеет следующее содержание: «Взяткодатель освобождается от уголовной ответственности лишь в том случае, если имело место вымогательство взятки и это лицо, до того, как об этом стало известно правоохранительным органам, но не позднее трёх дней после совершения преступления, добровольно сообщило в правоохранительные органы о факте дачи взятки и содействовало раскрытию преступления».

Представленные изменения в УК РА исходили из предложений, которые составила группа иностранных государств GRECO. В докладе про противодействие коррупции, составленном группой иностранных государств (GRECO), говорилось о том, что необходимо пересмотреть положение об автоматическом

освобождении от уголовной ответственности в случае деятельного раскаяния. GRECO поприветствовала внесённые в УК РА изменения, касающиеся установления трёхдневного срока для добровольного сообщения в правоохранительные органы, но также отметила, что всё же при наличии такого основания для освобождения от уголовной ответственности могут иметь место злоупотребления. Так, взяткодатель, в случае наличия добровольного сообщения в правоохранительные органы в трёхдневный срок, автоматически освобождается от уголовной ответственности, независимо от обстоятельств дела.

Таким образом, в УК РА установлено одно основание освобождения взяткодателя от уголовной ответственности, которое может быть применено исключительно при наличии всех нижеперечисленных обстоятельств:

1. если взяткодатель стал жертвой вымогательства;
2. он добровольно сообщил о преступлении правоохранительным органам;
3. добровольное сообщение было сделано не позднее трех дней после совершения преступления;
4. правоохранительным органам не было известно о совершенном преступлении;
5. лицо содействовало раскрытию преступления [2].

Мы постарались наиболее полно раскрыть особенности условий освобождения взяткодателя от уголовной ответственности согласно действующему законодательству РА и выделить их проблемные черты.

Так, законодатель говорит об освобождении взяткодателя, если имело место вымогательство взятки. Впервые вымогательство взятки, как квалифицирующее обстоятельство, было предусмотрено в декрете «О взяточничестве» 1918 года. Но законодатель не раскрыл понятия вымогательства взятки, и это послужило толчком для учёных, предметом исследования которых стало доктринальное определение понятия «вымогательство взятки». Некоторые учёные не видели различия между вымогательством взятки, как должностным преступлением, и простым вымогательством, как преступлением против собственности. Например, А.А. Ганин предлагал понимать под должностным вымогательством «требование взятки под угрозой применения насилия, либо под иной более опасной угрозой, которое поставило потерпевшего в тяжёлое или безвыходное положение» [3]. А, например, А. Старш считал, что под вымогательством нужно понимать не только создание условий для требования взятки, но также требование взятки под угрозой применения насилия, распространения сведений, позорящих потерпевшего, угроза уничтожения имущества и т.д., то есть положение, аналогичное вымогательству, как преступлению против собственности [4]. Г. Смолицкий отмечал, что в отличие от вымогательства, как преступления против собственности, при котором причинение имущественного вреда выражено лишь в виде угрозы, в случае вымогательства взятки причинение вреда может иметь место как способ получения взятки [5].

Впервые комментарий к понятию вымогательства взятки был дан в поста-

новлении Пленума Верховного Суда от 31 июля 1962 года «О судебной практике по делам о взяточничестве», согласно которому, вымогательство – это требование взятки со стороны должностного лица под угрозой совершения такого действия по службе, которое может причинить вред законным интересам взяткодателя, либо умышленное создание условий для взяткодателя, при которых он вынужден дать взятку для предотвращения причинения вреда своим законным интересам [6].

Вымогательство взятки необходимо отличать от требования взятки, которое входит в объективную сторону состава получения взятки. К вопросу о соотношении понятий требование взятки и вымогательство взятки обратился и Кассационный суд РА в деле Эд. Закаряна, Г. Геворгяна, В. Варданяна № ЕКД/0002/01/13 от 15.08.2014. Согласно данному постановлению, требование взятки может выражаться в приказе, указании, уговорах, ином воздействии на сознание и волю лица, которое не должно быть связано с применением насилия, угроз. Предъявляемое требование должно быть конкретным, наличным и реальным. Конкретность требования подразумевает точность в вопросе о предмете и размере взятки. При оценке реальности требования необходимо учитывать все фактические обстоятельства дела: способ предъявления требования, обстановку, интенсивность требования, место, время и т.д. То есть взяткодатель должен быть уверенным в том, что должностное лицо выполнит то или иное действие исключительно при исполнении его требования [7].

В пункте 24 вышеуказанного постановления Кассационного суда РА говорится о разграничении требования взятки от вымогательства взятки. Так, согласно данному постановлению, деяние следует квалифицировать как вымогательство взятки тогда, когда требование взятки сопряжено с угрозами причинить вред законным правам, интересам взяткодателя, в случае отказа в даче взятки, а равно поставить лицо в такое положение либо предъявить ему такие условия, при которых лицо вынуждено дать взятку, чтобы избежать нарушения своих законных прав.

То есть в основе разграничения требования взятки от вымогательства взятки лежит признак наличия угрозы со стороны взяткополучателя. Также Кассационный суд обращает внимание на то обстоятельство, что вымогательство взятки имеет место в лишь случаях, когда взяткодатель имел законные права, так как в противном случае, требование, сопряженное с угрозой, будет квалифицироваться как простое требование взятки, то есть по ч.1 или 2 ст.311 УК РА [8].

Исходя и вышеуказанного определения, можно выделить две формы вымогательства взятки:

– требование дачи взятки, которое сопряжено с угрозой причинения вреда законным правам и интересам взяткодателя. Например, требование взятки за назначение на должность лица, в случае, если имеются все законные предпосылки для назначения на эту должность; либо требование взятки под угрозой привлечения к уголовной или административной ответственности;

– поставление лица в такое положение либо предъявление ему таких условий, при которых лицо вынуждено дать взятку, чтобы избежать нарушения сво-

их законных прав. Например, необоснованное оттягивание срока выдачи лицу определённых документов, которые необходимы лицу для разрешения крайне важных вопросов.

Ряд авторов считает, что необходимо дать более широкое определение вымогательства взятки и предлагает следующее определение: «Вымогательство взятки – это требование со стороны должностного лица дать ему взятку под угрозой совершения какого-либо невыгодного для взяткодателя действия, независимо от того, защищаются ли законом права и интересы взяткодателя» [9].

Обязательным признаком вымогательства является угроза нарушить права и законные интересы граждан или создание условий, влекущих нарушение таких прав и интересов и причинение гражданам материального или морального вреда. Если взятка дается за удовлетворение незаконных интересов граждан и взяткополучатель угрожает, действуя по закону, ограничить права лица или применить к нему принудительные меры, основанные на законе, такие действия должностного лица нельзя признать вымогательством [10].

Следующее обязательное условие, которое должно наличествовать для освобождения взяткодателя от уголовной ответственности – это добровольное сообщение о даче взятки правоохранительным органам.

Так, Кассационный суд РА в своем постановлении по делу Э.Адамяна №ЕЭД/0048/01/14 от 16 декабря 2014 года, установил, что добровольное сообщение о совершенном преступлении имеет огромное значение как для лица, совершившего преступление, так и для органов расследования. С одной стороны, оно влечет назначение более мягкого наказания, чем предусмотрено санкцией конкретной статьи, либо в определенных случаях к освобождению лица от уголовной ответственности, а с другой стороны, оно облегчает работу по расследованию и раскрытию преступления [11].

Согласно вышеуказанному постановлению, сущность явки с повинной заключается в том, что лицо добровольно и с повинной обращается в правоохранительные органы и сообщает о совершенном им преступлении, признает свою вину и устно или письменно сообщает об обстоятельствах дела.

Сообщение о преступлении должно признаваться добровольным независимо от мотивов, которыми руководствовался заявитель. Не может признаваться добровольным сообщение, сделанное в связи с тем, что о преступлении стало известно органам власти. Мотивы взяткодателя, руководствуясь которыми они сообщают о совершённом преступлении, весьма разнообразны. К ним относятся как страх перед уголовной ответственностью, так и осознание взяткодателем неправильности совершённых действий, его раскаяние и т.д. Правоприменительная практика показала, что часты случаи добровольного сообщения о даче взятки по мотивам мести, зависти и т.д. Такие мотивы могут возникнуть, например, в связи с изменением отношений между взяткодателем и взяткополучателем, когда последний не надлежаще выполнил обещанные действия. Такой мотив взяткодателя, естественно, является низменным, но так как органам власти



не было известно о совершённом преступлении, а именно его сообщение не было вынужденным, взятодатель освобождается от уголовной ответственности. Некоторые учёные считают, что если мотивы взятодателя носят низменный характер, то органы власти не должны освобождать его от уголовной ответственности [12]. Но такое положение не сможет способствовать усилению борьбы с взяточничеством, ведь одной из целей законодателя при внесении нормы об освобождении взятодателя от уголовной ответственности было усиление борьбы со взяточничеством.

Добровольным сообщением считается сообщение, которое сделано по собственному желанию лица, если он осознаёт возможность избегания, укрытия от суда и следствия.

Так, Кассационный суд РА к добровольному сообщению о преступлении относит следующие случаи:

1) когда правоохранительным органам неизвестно о факте совершения преступления и о лице, его совершившем, и виновное лицо добровольно сообщает о совершенном им преступлении;

2) когда правоохранительным органам известно о факте совершения преступления, но не установлено лицо, его совершившее, и виновное лицо добровольно заявляет о совершенном им преступлении;

3) когда правоохранительным органам известно как о факте совершения преступления, так и о лице, его совершившем, но виновное лицо добровольно сообщает о совершенном им преступлении, не осознавая того факта, что об этом известно правоохранительным органам;

4) лицо, задержанное по подозрению в совершении преступления, добровольно сообщает о факте совершения им иного преступления, осознавая, что правоохранительным органам ничего неизвестно о данном преступлении [13].

В научной литературе отмечается, что к добровольному сообщению о даче взятки также следует относить и те случаи, когда правоохранительные органы, расследуя получение взятки конкретным должностным лицом, посредством СМИ обращаются к населению с просьбой сообщить о фактах дачи взяток [14].

Следующее обязательное условие: добровольное сообщение должно быть сделано не позднее трех дней после совершения преступления. Авторы изменений, внесённых в УК РА, относительно освобождения взятодателя на основании добровольного сообщения в течение трёх дней со дня совершения преступления, обосновывали принятие этого изменения тем, что в докладе про противодействие коррупции, составленном группой иностранных государств (GRECO), было представлено предложение о том, что необходимо освобождать взятодателя от уголовной ответственности только в том случае, если лицо добровольно сообщило об этом немедленно [15]. Нужно отметить, что во многих государствах нет временного ограничения для освобождения взятодателя от уголовной ответственности по добровольному заявлению. Например, в УК России, Украины, Белоруссии, Молдовы, Туркмении, Узбекистана, Таджикистана, Франции, Бельгии, Латвии, Литве и т.д. Но та-

кое законодательное урегулирование существует в уголовном кодексе Испании, где в ст. 427 говорится о добровольном заявлении взяточдателя о совершённом преступлении в течение десяти дней со дня совершения преступления. Установление законодателем Армении трёхдневного срока подачи добровольного заявления породило различные дискуссии. Так, сторонники данного изменения считают, что установление трёхдневного срока позволит пресечь коррупционную деятельность должностных лиц на более ранних стадиях, и это значительно упростит возможность доказывания факта получения взятки. Также в литературе бытует мнение, что в тех случаях, когда взяточдатель не знал о трёхдневном сроке добровольного заявления о даче взятки и обратился в правоохранительные органы позже, он также подлежит освобождению от уголовной ответственности. Мы не согласны с данной точкой зрения, так как в данном случае установление законодателем временного ограничения бессмысленно и нецелесообразно, и не способствует единообразному применению закона. Ведь если исходить из факта знания либо незнания закона, по такой логике можно освобождать от ответственности за все преступления, установленные в УК. И здесь важно отметить, что помимо всего, нарушается один из незыблемых постулатов права: «Незнание закона не освобождает от ответственности».

Еще одним обязательным условием освобождения взяточдателя является то обстоятельство, что в момент добровольного сообщения правоохранительным органам не было известно о совершённом преступлении. Но здесь необходимо отметить, что согласно мнению большинства учёных, что подтверждается и правоприменительной практикой, добровольным считается также сообщение взяточдателя, когда правоохранительным органам известно о совершённом преступлении, если взяточдатель не знал, что правоохранительным органам известно об этом. То есть определяющим фактором при решении вопроса о добровольности заявления взяточдателя является не момент заявления (до или после возбуждения уголовного дела), а субъективное представление заявителя об осведомлённости следствия о совершённом преступлении [16]. Также данное определение содержится в постановлении Кассационного суда РА по делу Э. Адамяна №ЕЭД/0048/01/14 от 16 декабря 2014 года.

Следующее обязательное условие – это способствование раскрытию преступления. Данное условие также содержится в примечании к статье 291 УК РФ. Законодатель говорит об освобождении взяточдателя, если взяточдатель способствовал расследованию и (или) раскрытию преступления. Изменения, которые внёс армянский законодатель в УК РА, породили обязанность взяточдателя, для освобождения его от уголовной ответственности, способствовать раскрытию или расследованию преступления.

Способствование к раскрытию или расследованию преступления может выражаться в следующих действиях взяточдателя:

- в оказании правоохранительным органам активной помощи по проведению следственных действий;
- в изобличении соучастников преступления;

- в установлении обстоятельств, имеющих значение для дела;
- в выяснении причин и условий совершения преступления и т.д.

Обстоятельствами, указывающими на активность взяткодателя, способствующего раскрытию или расследованию преступления, являются действия взяткодателя, который по собственному решению проявил инициативу в оказании помощи правоохранным органам в проведении следственных действий, при помощи которых были раскрыты неизвестные обстоятельства дела, разоблачены соучастники и т.д. [17]. Деятельность органов следствия и дознания значительно облегчается, если лицо добровольно желает способствовать раскрытию преступления, хотя это и не является его обязанностью. Но одно лишь желание взяткодателя участвовать в раскрытии преступления, которое не подкреплено активными действиями, не может быть признано активным способствованием раскрытию или расследованию преступления. Именно действия взяткодателя должны оказать помощь правоохранным органам в раскрытии преступления, сократить время и затраты на выполнение процессуальных действий и т.д.

Нужно отметить, что в УК РА данное дополнительное условие освобождения взяткодателя от уголовной ответственности отсутствовало до недавнего времени. Но ввиду того, что РА должна соблюдать принятые на себя международные обязательства, также внесла в УК РА данное дополнительное условие для освобождения взяткодателя от уголовной ответственности [18]. До внесения изменений в УК РА армянский законодатель исходил из того, что норма об освобождении взяткодателя от уголовной ответственности является поощрительной, и, несмотря на поведение взяткодателя после его добровольного сообщения о даче взятки или вымогательстве взятки, независимо от каких-либо причин, он подлежит освобождению от уголовной ответственности.

Подведя итог нашей научной работы, следует сформулировать нижеследующие выводы.

Взяточничество не имеет единого определения. Взяточничество – это собирательный термин, отражающий характеристику трёх самостоятельных преступлений: получение взятки, дача взятки и посредничество во взяточничестве.

Изменения, которые внёс армянский законодатель, носят алогичный характер, так как освобождение взяткодателя от уголовной ответственности – это поощрительная норма, и она создана в целях повышения раскрываемости таких преступлений. А так как мы знаем, что дача-получение взятки – в высшей степени латентные преступления, и как взяткодатель, так и взяткополучатель имеют общую заинтересованность, никто из них не стремится раскрыть факт совершения данного преступления перед правоохранными органами. И в данном случае непонятна логика законодателя, согласно которой создаются препятствия для раскрытия данной категории преступлений в виде внесения новых обязательных условий освобождения взяткодателя.

Так, порой, взяткодатель, сам того не понимая, становится жертвой вымогательства, будучи вынужденным передать взятку должностному лицу. И, соглас-

но действующему законодательству, он не может быть освобождён от ответственности, хотя норма об освобождении взяткодателя в связи с вымогательством взятки действовала около ста лет и прекрасно воспринималась правоприменительной практикой.

Данная норма продолжает действовать во многих странах СНГ и непонятно, почему наш законодатель стремится соответствовать стандартам европейских государств, не учитывая особенности нашей страны. Ведь, зачастую, те лица, которые обращаются в правоохранительные органы, становятся неприязненными некоторым слоям нашего общества в виду отсутствия у них правосознания.

Мы считаем, что новое определение условий освобождения взяткодателя от уголовной ответственности не послужит повышению раскрываемости данной категории преступлений. И, учитывая то обстоятельство, что более 55 % данной категории преступлений раскрывались на основании добровольного сообщения о даче взятки, будут ли теперь взяткодатели сообщать о совершённом преступлении, зная, что их освобождение от ответственности ещё и под вопросом – естественно не будут. И даже если взяткодатель выполнил все условия, перечисленные в УК РА, его освобождение – это не обязанность, а привилегия правоохранительных органов, которые могут и не освободить его от ответственности.

Мы считаем, что ужесточение армянским законодателем подхода к основаниям освобождения взяткодателя от уголовной ответственности было необоснованным, ведь норма об освобождении взяткодателя является поощрительной, и не должна создавать каких-либо препятствий для освобождения взяткодателя.

#### ЛИТЕРАТУРА

1. *Здравомыслов Б.В.* Должностные преступления. Понятие и квалификация. Москва, 1971г., с.124, Цагикян С.Ш. Взятничество как проблема // Вектор науки ТГУ, № 3 (3). 2010.
2. Электронный источник:  
<http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=6716&Reading=0>
3. *Ганин А.А.* Уголовный кодекс РСФСР в редакции 1926 года в вопросах и ответах. М., 1927. С.136.
4. *Старш А.* Взятка и посредничество во взяточничестве // Рабочий суд. М.,1927. № 5. С.392.
5. Советское уголовное право. Особенная часть / Отв. ред. Б.С. Утевский. М., 1958. С.238.
6. *Медведев А.М.* Вымогательство взятки // Государство и право. 1996, № 8. С.100.
7. Постановление Кассационного суда РА по делу Эд. Закаряна, Г. Геворгяна, В.Варданяна № ЕКД/0002/01/13 от 15.08.2014г.
8. *Аникин А.* Ответственность за взяточничество по новому УК // Законность. 1997, № 6, С.33; *Медведев А.М.* Вымогательство взятки // Государство и право. 1996, № 8. С.100.
9. Комментарий к Уголовному кодексу Российской Федерации (под ред. В.М. Лебедева). «Норма», 2013 (система Гарант).

10. Постановление Кассационного суда РА по делу Э.Адамяна №ЕЭД/0048/01/14 от 16 декабря 2014г.
11. Курс советского уголовного права / Под ред. Н.А. Беляева. Л., 1978. Т. 4. С. 305; Асланов Р. М. Деятельное раскаяние взяточника и его правовое значение // Вестник ЛГУ. 1989. № 2. С 12.
12. Постановление Кассационного суда РА по делу Э.Адамяна. ЕЭД/0048/01/14 от 16 декабря 2014г.
13. *Волженкин Б.В., Квашин В.Е., Цагикян С.Ш.* Ответственность за взяточничество: Социально-правовые и криминологические проблемы. Ер.: Айастан, 1988. СС. 154–155.
14. Электронный источник:  
[http://www.parliament.am/draftreading\\_docs4/2/К-1926DR2.pdf](http://www.parliament.am/draftreading_docs4/2/К-1926DR2.pdf);
15. *Цагикян С.Ш.* Некоторые вопросы законодательного регулирования освобождения взяточника от уголовной ответственности // Правонарушения и юридическая ответственность: Материалы Всероссийской научно-практической конференции. Тольятти: ТГУ, 2009. СС. 362–366.
16. *Цагикян С.Ш.* Некоторые проблемы правоприменительной практики в контексте реализации международных обязательств // Вектор науки ТГУ. Юридические науки, 2013. №1 (12).
17. Комментарий к Уголовному кодексу Российской Федерации (под ред. В.М. Лебедева). «Норма», 2013 (система Гарант).
18. Электронный источник:  
<http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=6716&Reading=0>

**TOPICAL ISSUES OF RELEASE FROM CRIMINAL LIABILITY  
FOR BRIBERY IN CONNECTION WITH THE VOLUNTARY MESSAGE  
(DUE TO RECENT CHANGES OF THE CRIMINAL LEGISLATION  
OF THE REPUBLIC OF ARMENIA)**

*S. Tsaghikyan, A. Hakobyan*

**SUMMARY**

A brief analysis of the development of the legislation about the release from criminal liability for bribery, including the problem of release the briber from criminal liability due to recent changes of the criminal legislation of the Republic of Armenia.

**Keywords:** bribery; comparative analysis; liability; bribe taker; release from criminal liability.

**ԿԱՇՇԱՆԱԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ  
ԱԶՏՎԵԼՈՒ ԱԿՏՈՒԱԼ ԽՆԴԻՐՆԵՐԸ՝ ԿԱՄԱՎՈՐ ՀԱՅՑԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ  
(ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՆԴՐՈՒԹՅԱՆ  
ՎԵՐՋԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՑՄԻ ՆԵՐՔՈ)**

*Ս.Շ. Ծաղիկյան, Ա.Վ. Հակոբյան*

**ԱՍՓՈՓՈՒՄ**

Հոդվածում ներկայացված է կաշառակերության համար քրեական պատասխանատվությունից ազատվելու վերաբերյալ օրենս-

դրության զարգացման համառոտ վերլուծությունը, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրության վերջին փոփոխությունների տեսակետից կաշառակերության համար քրեական պատասխանատվությունից ազատվելու խնդիրները:

**Հիմնաբառեր՝** կաշառակերություն; համեմատական վերլուծություն; պատասխանատվություն; կաշառակեր; քրեական պատասխանատվությունից ազատելը:

**ԻՐԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ  
(ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ  
ԾԱՆՐԱՑՆՈՂԵՎ ԱՌԱՎԵԼ ԾԱՆՐԱՑՆՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ**

**Ա.Վ. Ոսկանյան**

**ԱՄՓՈՓՈՒՄ**

Հանգամանորեն ուսումնասիրության և վերլուծության է ենթարկվել իրացնելու նպատակով թմրամիջոցների ու հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվությունը, դրա ծանրացնող ու առավել ծանրացնող հանգամանքները և այդ ամենի արդյունքում կատարվել են որոշակի առաջարկություններ, որոնք կնպաստեն ոլորտի իրավական կարգավորման արդյունավետության բարձրացմանը:

**Հիմնաբառեր`** թմրամոլություն, թմրամիջոց, հոգեմետ նյութ, քրեական պատասխանատվություն, թմրանյութի իրացում:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը որպես սոցիալական չարիք ամբողջ աշխարհում դարեր ի վեր համարվել է ամենատարածված արատներից մեկը:

Թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի ապօրինի արտադրությունը, դրանց ապօրինի շրջանառության ծավալները և աճի միտումները լուրջ վտանգ են ներկայացնում մարդկանց առողջությանն ու բարեկեցությանը և բացասական ազդեցություն գործում հասարակական կյանքի տնտեսական, մշակութային և քաղաքական ոլորտների վրա:

Թեման արդիական է մի շարք հանգամանքներով. նախ, թմրամոլությունն ու թմրամիջոցների ապօրինի շրջանառությունն ուղղակիորեն կապված է ընդհանուր հանցավորության հետ, քանի որ թմրամոլը թմրամիջոց հայթհայթել չկարողանալու պատճառով կամ գտնվելով դրանց ազդեցության տակ` կատարում է բազմաթիվ այլ հանցագործություններ` սպանություն, դիտավորությամբ առողջությանը տարբեր աստիճանի վնաս պատճառել, ավագակություն, կողոպուտ, գողություն և այլն: Երկրորդը. թմրամոլությունն ու թմրամիջոցների ապօրինի շրջանառությունն անմիջականորեն կապակցված են կազմակերպված հանցավորության այլ ձևերի հետ, որոնք քայքայում են օրինական տնտեսական գործունեությունը և սպառնալիք են ստեղծում պետության կայունության, անվտանգության և անկախության համար:

Հետազոտության հիմնական նպատակն է համալիր ուսումնասիրության ենթարկել իրացման նպատակով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվությունը, դրա առանձնահատկությունները, ծանրացնող ու

առավել ծանրացնող հանգամանքները, այս ինստիտուտը կարգավորող օրենսդրության համակարգը և դրանում առկա խնդիրների վերհանման արդյունքում տալ տեսականորեն և պրակտիկորեն հիմնավորված այնպիսի առաջարկներ, որոնք կնպաստեն ոլորտի իրավական կարգավորման արդյունավետության բարձրացմանը:

Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի իրացման համար քրեական պատասխանատվության առանձնահատկություններն ուսումնասիրվել են Է. Գասանովի, Յու. Անտոնյանի, Վ. Կնյազևի, Մ. Մարկոսյանի, Ն. Մադաքյանի, Ա. Գաբուզյանի, Գ. Ղազինյանի և մի շարք այլ հեղինակների կողմից:

Հետազոտության օբյեկտ են հանդիսանում թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի իրացման համար քրեական պատասխանատվության օրինաչափությունները, իսկ առարկան՝ թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի իրացնելու նպատակով ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվության օրենսդրական ձևակերպումները, սահմանված պատժի ձևերը և դրանց բովանդակությունը, անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները:

Հետազոտության մեթոդաբանական հիմքն են կազմել համակարգակառուցվածքային, գործառնութային, ձևական-տրամաբանական, համեմատական-իրավական մեթոդները:

Հետազոտության տեսական հիմքն են հանդիսացել՝ Է. Գասանովի, Յու. Անտոնյանի, Վ. Կնյազևի, Մ. Մարկոսյանի, Ն. Մադաքյանի, Ա. Գաբուզյանի, Գ. Ղազինյանի և մի շարք այլ հեղինակների աշխատությունները, դրանցում արտահայտված տեսակետները:

Աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ համակողմանիորեն հետազոտվել են իրացնելու նպատակով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվության ծանրացնող ու առավել ծանրացնող հանգամանքները, և ոլորտի կարգավորման արդյունավետության բարձրացման համար արվել են տեսականորեն և գործնականորեն հիմնավորված որոշակի առաջարկություններ:

***Իրացնելու նպատակով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության ծանրացնող և առավել ծանրացնող հանգամանքները:***

Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործություններն իրենց ամրագրումն են գտել ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի՝ «Բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների» 26-րդ գլխում:

Բնակչության առողջության իրավական պաշտպանության միջոցներից մեկն էլ քրեաիրավական պաշտպանությունն է, որն իրականացվում է՝ մարդկանց առողջությանը վնաս պատճառող կամ այն վտանգի տակ դնող



որոշակի արարքների համար քրեական պատասխանատվություն սահմանելով:

Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների համար քրեական պատասխանատվությունը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 266–274-րդ հոդվածներով [1]: Այս հանցագործություններից ամենավտանգավորը ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունն է, որի վտանգավորությունը հիմնականում պայմանավորված է թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի համատարած օգտագործմամբ, որը վնաս է հասնում ոչ միայն կոնկրետ անձին, այլ բնակչությանը, այսինքն՝ անորոշ թվով, մեկից ավելի մարդկանց առողջությանը, հասարակական անվտանգությանը, պետական ձեռնարկությունների և հիմնարկների կանոնավոր գործունեությանը: Թմրաբիզնեսը, ինչպես վկայում են հեղինակավոր աղբյուրները և համաշխարհային լրատվությունը, իր ֆինանսական գործարքների մասշտաբով գրավում է երկրորդ տեղը զենքի առևտրից հետո [2]: Բացի այդ թմրամիջոցների ու հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառությունից ստացված ահռելի եկամուտները (համաշխարհային առևտրի 10%-ը) հարուցում են նշված հանցատեսակով զբաղվող հանցավոր խմբավորումների հետաքրքրությունը՝ մշտապես կատարելագործելով հանցավոր գործունեության մեխանիզմը [3]:

ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում իրացնելու նպատակով թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր ապօրինի պատրաստելու, վերամշակելու, ձեռք բերելու, պահելու, փոխադրելու, առաքելու կամ դրանք ապօրինի իրացնելու համար, որը պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով, իսկ 2-րդ մասը, որպես առավել ծանրացնող հանգամանք, պատասխանատվություն է սահմանում նույն արարքների համար, որոնք կատարվել են՝

- 1) մի խումբ անձանց կողմից,
- 2) խոշոր չափերով,
- 3) ազատազրկման կամ կալանքի ձևով պատիժը կրելու վայրերում կամ կալանավորվածներին պահելու վայրերում,
- 4) ուսումնադաստիարակչական հաստատությունում, զվարճանքի կամ հանդիսադիր վայրում կամ հաստատությունում [4]:

Հանցանքը համարվում է մի խումբ անձանց կողմից կատարված, երբ երկու կամ ավելի անձինք իրականացնում են քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմը: Միաժամանակ մի խումբ անձանց կողմից նշանակում է հանցանքն ինչպես նախնական համաձայնությամբ, այնպես էլ առանց նախնական համաձայնության խմբի կողմից կատարելը: Այս ծանրացնող հանգամանքը բացակայում է, երբ հանցագործության օբյեկտիվ կողմը կատարվում է մեկ անձի կողմից, իսկ մյուս մասնակիցները ստանձնում են այլ դեր (դրդիչ, կազմակերպիչ, օժանդակող) [5]:

Ազատագրված կամ կալանքի ձևով պատիժ կրելու վայրեր են հանդիսանում ՀՀ քրեակատարողական օրենսդրությամբ նախատեսված ուղղիչ հիմնարկները, որոնցում պատիժ են կրում ազատագրված կամ կալանքի դատապարտված անձիք: Արարքը որակվում է այս ծանրացնող հանգամանքով, երբ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածում նշված արարքները կատարվում են նշված վայրերի տարածքում՝ անկախ նրանից, թե պատրաստված կամ վերամշակված թմրամիջոցը կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութը ուր է առաքվում կամ տեղափոխվում [6]:

Նշվածի հանրային առավել բարձր վտանգավորությունը պայմանավորված է նրանով, որ հանցավորը թմրամիջոցը իրացնում է այնպիսի վայրում, որը պետության կողմից նպատակայնորեն ստեղծված է հանցագործություն կատարած անձանց ուղղելու, հետագայում նոր հանցագործությունների կատարումը կանխելու և սոցիալական արդարությունը վերականգնելու համար:

Ուսումնադաստիարակչական վայրեր են համարվում բոլոր այն հաստատությունները, որոնցում իրականացվում են ուսումնական կամ դաստիարակչական գործընթացներ՝ բուհեր, դպրոցներ, քոլեջներ, մանկատներ և այլն:

Ձվարճանքի կամ հանդիսադիր վայրեր կամ հաստատություններ են համարվում այն վայրերը, որտեղ տեղի են ունենում ուրախ միջոցառումներ (համերգ, թատրոն, ռեստորան և այլն) կամ հանդիսավոր արարողություններ (ակումբ, մարզադաշտ, մշակույթի տուն և այլն): Տվյալ պարագայում քննարկվող հանցագործության հանրային առավել բարձր վտանգավորությունը պայմանավորված է նրանով, որ զվարճանքի վայրերում կամ ուսումնադաստիարակչական հաստատություններում ժամանակ են անցկացնում կամ կրթություն են ստանում հիմնականում երիտասարդ սերնդի ներկայացուցիչները, որոնք անհամեմատ ավելի դյուրահավատ, հեշտ գայթակղվող են, և նրանց թմրամիջոց իրացնելը վտանգի տակ է դնում առողջ սերունդ ունենալու հասարակության մղումը:

Որպես այս հանցագործության առավել ծանրացնող հանգամանք, ՀՀ քրեական օրենսգրքի 266 հոդվածի 3-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքների համար, որոնք կատարվել են՝

- 1) կազմակերպված խմբի կողմից,
- 2) առանձնապես խոշոր չափերով [7]:

Կազմակերպված խումբը համարվում է մարդկանց կայուն խումբ՝ նախօրոք միավորված մեկ կամ մի քանի հանցագործություններ կատարելու համար: Կազմակերպված հանցավոր խումբը հանցակցության բարդ ձև է, որում կարող են մասնակցել բոլոր տեսակի մասնակիցները: Կազմակերպված խումբը կարող է կազմակերպվել ինչպես մեկ, այնպես էլ մի քանի հանցագործությունների կատարման համար: Կազմակերպված խումբը նախ-

նական համաձայնությամբ հանցակցության առավել վտանգավոր տեսակն է, որի անդամները մասնագիտացված են և միմյանց հետ գտնվում են կայուն հարաբերության մեջ[8]: Այդպիսի խմբերում մասնակիցների միջև գոյություն ունեն դերերի և պարտականությունների վերաբաշխում (ումանք պատրաստում են համապատասխան առարկաներ, ումանք այն տեղափոխում են, երրորդները՝ վաճառում), ունեն մտածված պլաններ, առանձնանում են կազմակերպիչները:

Հարկ է նշել, որ հաճախ պրակտիկայում որոշակի խնդիրներ են առաջ գալիս արարքը մի խումբ անձանց և կազմակերպված խմբի կողմից կատարված հանցագործությունների որակման տեսանկյունից: Այս հասկացությունների վերաբերյալ առավել հստակ և ամբողջական մոտեցում է դրսևորել ՀՀ վճռաբեկ դատարանը /ԼԴ/0136/01/10/ գործով՝ 11.05.2011թ. արտահայտած իրավական դիրքորոշման մեջ [9], որը պետք է ուղղորդող նշանակություն ունենա միասնական դատական պրակտիկայի ձևավորման համար:

Այսպես՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նախնական համաձայնությամբ գործող խումբը և կազմակերպված խումբը, իրարից տարբերելու համար էական նշանակություն ունեն հետևյալ երեք չափորոշիչները՝

ա) կայունությունը,

բ) միավորվածությունը,

գ) մեկ կամ մի քանի հանցանքներ կատարելը:

Կազմակերպված խմբի կայունության չափորոշիչը արարքը կազմակերպված խմբի կողմից որակելու համար անհրաժեշտ, հիմնական հատկանիշն է: Այն դրսևորվում է խմբի ամրությամբ, անդամների կողմից իրենց առջև դրված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ կազմակերպվածությամբ, խմբի անդամների ջանքերի համաձայնեցվածությամբ, խմբի մեկ կամ մի քանի անդամների կողմից մյուսներին ղեկավարելով, հատուկ, խմբի գործունեության համար անհրաժեշտ ներխմբային նորմերի առկայությամբ:

Անհրաժեշտ է ընդգծել, որ յուրաքանչյուր դեպքում կայունությանը բնութագրող վերոնշյալ հատկանիշները պետք է գնահատվեն գործի կոնկրետ հանգամանքների լույսի ներքո:

Կազմակերպված խմբի միավորվածության չափանիշը ենթադրում է մեկ կամ մի քանի հանցագործություններ կատարելու մշակված ծրագրերի առկայությունը, այդ ծրագրերի ակտիվ իրականացումը, ոտնձգությունը համատեղ կատարելու մշակված եղանակների առկայությունը, դերերի մշակված տեխնիկական բաշխումը, հանցանքի կատարումը դյուրին դարձնելուն ուղղված՝ նախապես պայմանավորված գործողությունների կատարումը, հանցանքի կատարման համար բարենպաստ պայմանների ստեղծումը:

Կազմակերպված խումբը ստեղծվում է տևական ժամանակ հանցավոր գործունեությամբ զբաղվելու նպատակով, դրա ստեղծման նպատակը, որ-

պես կանոն, մի շարք հանցանքներ, այդ թվում՝ համասեռ հանցագործություններ կատարելն է: ՀՀ քրեական օրենսդրությունը չի բացառել այն հանգամանքը, որ խումբը կարող է ստեղծվել մեկ, սակայն երկարատև և մանրակրկիտ հանցագործություն կատարելու նպատակով: Այս առումով կարևոր են կազմակերպված խմբին բնորոշող վերընշված երկու հատկանիշները՝ կայունությունը և միավորվածությունը, քանի որ կազմակերպված խմբի յուրաքանչյուր անդամ գիտակցում է, որ կայուն և միավորված խմբի կազմի մեջ է մտնում, մասնակցում է խմբի անդամների փոխադարձ համաձայնությամբ կատարվող արարքների կամ դրանց մի մասին:

Միաժամանակ Վճռաբեկ դատարաններն ընդգծում է, որ տվյալ որոշման 12–15-րդ կետերում նշված և վերլուծված չափանիշների հետ մեկտեղ առկա են նաև նախնական համաձայնությամբ գործող անձանց և կազմակերպված խմբի տարբերակման լրացուցիչ չափորոշիչներ, որոնք պետք է հաշվի առնվեն հիմնական չափանիշները գնահատելիս: Դրանք են՝ կազմակերպված խմբի կողմից կատարվող հանցագործության երկարատև պլանավորումը, տևական ժամանակով հանցավոր գործունեությամբ զբաղվելու նպատակը, խմբի նյութատեխնիկական հագեցվածությունը, ընդհանուր ֆինանսական միջոցների առկայությունը և այլն: Այսպիսով՝ կազմակերպված խմբին բնորոշող հիմնական առանձնահատկություններն են՝

ա) հանցանքի կատարմանը երկու կամ ավելի անձանց մասնակցությունը,

Մ.Վ. Մաֆոնովայի հետազոտությունները ցույց են տվել, որ կնոջ՝ մասնագիտության մեջ ունեցած հաջողությունները, ինքնիրացումը մեծապես կապված է այն ընտանեկան դաստիարակությունից և դիրքորոշումներից, որոնք նա ստացել է դեռ վաղ տարիքում[7]: Դիրքորոշումների տակ հասկանում ենք մարդու ծրագրավորվածությունը նախնական որոշումներով կենսական դիրքորոշման նկատմամբ: Մարդը ապրում է իր կյանքը

«սցենարով», որը գրվել է նրա մտերիմների, առաջին հերթին ծնողների ակտիվ մասնակցությամբ, նա ներկայումս որոշումներ է կայացնում, որոնք հիմնված են կարծրատիպերի վրա, որոնք ինչ-որ մի ժամանակ անհրաժեշտ են եղել նրա հոգեբանական գոյատևման համար: Ըստ Է.Բեռնի կենսական սցենարը կյանքի պլան է, որը հիշեցնում է ներկայացում, որը անձը ստիպված է խաղալ: Նա կախված մանկության տարիներին ընդունված դիրքորոշումներից գրանցում է մանկական Ես վիճակը այն տրանսակցիաների միջոցով, որոնք տեղի են ունենում ծնողների և երեխայի միջև (տրանսակցիաների տակ հասկանում ենք մարդկանց փոխազդեցություններ): Գիտակցելով սեփական դիրքորոշումները և խաղերը՝ անձը կարող է հասկանալ իր կյանքի սցենարը: Ինչպես կարծում էր տրանզակտային վերլուծության հիմնադիր Է. Բեռնը, գրեթե ողջ մարդկային գործունեությունը ծրագրավորված է կյանքի սցենարով, որը սկսում է վաղ մանկությունում: Սկզբում սցենարը գրվում է ոչ խոսքային, հետո երեխաները ծնողներից ստանում են խոսքային սցենարային հաղորդագրություններ, որոնք կարող են վերաբերել ընդհանուր կյանքի պլանին: Օրինակ, «դու հայտնի կդառնաս», «դու անհաջողակ ես, դու երբեք ոչնչի չես հասնի»: Բացի դրանից տվյալ սցենարային դիրքորոշումները կարող են վերաբերալ մարդու կյանքի տարբեր կողմերին՝ երեխաներին վերագրվում է մասնագիտական սցենար՝ «դու իսկական դերասան ես», տղամարդկության վերաբերյալ սցենար՝ «հույսդ մի դիր, որ քո տվյալներով կամուսնանաս», կրթության, կրոնի, սպորտի, զվարճանքների և այլնի վերաբերյալ սցենարներ[6]:

Հիմնվելով որոշ տեսական մոտեցումների վրա մեր կողմից իրականացվել է հետազոտություն, որի նպատակն էր ուսումնասիրել ընտանեկան և մասնագիտական ոլորտների փոխկապակցվածությունը կնոջ ինքնիրացման գործում: Հետազոտությունները անց են կացվել ՀՀ Երևան քաղաքում, ինչպես նաև Վայոց Ձորի, Կոտայքի, Շիրակի մարզերում: Հետազոտությանը մասնակցել են 65 աշխատող կանայք, ովքեր ամուսնացած են ունեն 2 և ավելի երեխաններ: Հետազոտության ընթացքում օգտագործվել է մեր կողմից կազմված հարցաթերթիկը և Անձի ինքնաիրականացման դիագնոստիկ թեստը(Ա.Վ. Լազուկին): Իրականացված հետազոտության արդյունքում ստացանք հետևյալ տվյալները: Հարցաթերթիկի տվյալների վերլուծությունից պարզ է դառնում, որ՝ աշխատելու և մասնագիտական ինքնիրացման հնարավորությունները շատ դեպքերում պայմանավորված են հասարակության մենթալիտետի ազդեցությամբ: Հասարակության մեջ գերակշռող գենդերային դիրքորոշումները և դերային ակնկալիքները պայմանավորում են, թե կինը ինչպես է իրեն տեսնում մասնագիտական գործունեության բնագավառում: Ուսումնասիրությանը մասնակցած կանանց 44%-ը նշում էին, որ կնոջ առաջնային պարտականությունը՝ ընտանիքով և երեխաներով զբաղվելը, ազդում է կնոջ մասնագիտական առաջընթացի վրա՝ խոչընդոտելով կնոջ մասնագիտական ինքնիրացմանը: Միևնույն ժամանակ, կանանց 50% -

ի համար մասնագիտական կյանքում հաջողություններ ունենալու հիմքը առողջ ընտանեկան փոխհարաբերություններն են: Հետազոտվողների 6%-ը չեն պատասխանել այս հարցին:

Ուսումնասիրությունները ցույց տվեցին նաև, որ ներկայումս հայ կինն իր մասնագիտական գործունեության մեջ իր առջև դնում է հավակնությունների այն մակարդակը, որը չի խանգարի ինքնիրացվել իրեն, առաջին հերթին, որպես ընտանիքի կին և մայր: Ըստ հետազոտվողների 78%-ի մասնագիտական բարձր հավակնություններ ունենալը իր հերթին բերում է նոր պատասխանատվությունների առաջացմանը, բարդեցնում է կնոջ աշխատանքային գործունեությունը: Հետազոտվողների 85%-ը աշխատանք թե՛ ընտանիք դիլեմայի ընտրության մեջ նախընտրել են ընտանիքը: Հարցաթերթիկից պարզ է դառնում նաև, որ կանանց մասնագիտական ինքնիրացումը կախված է ընտանիքի մոտեցումից: Շատ կանայք նշում էին, որ եթե ընտանիքը աջակցում է, ապա կինը կարող է հասնել հաջողության և ցանկանալ շարունակել իր մասնագիտական աճը:

Հիմնվելով հարցաթերթիկից ստացված արդյունքների վերլուծությունների վրա՝ կարելի է եզրակացնել, որ կանանց մասնագիտական ինքնիրացումը որոշակի սահմանից հետո պայմանավորված է ոչ այնքան կնոջ ինքնուրույն որոշումով, որքան ընտանիքի և հասարակության դիրքորոշումներով:

Անձի ինքնաիրականացման դիագնոստիկ թեստի կիրառումը նպատակ ուներ ուսումնասիրելու հետազոտվող կանանց ինքնաիրականացման մակարդակը:

Թեստի արդյունքների վերլուծությունից պարզ դարձավ, որ ինքնաիրականացման բարձր մակարդակ է նկատվել այն կանանց շրջանում, ում ծնողները հատկապես մայրը աշխատել է, և իր երեխայի ապագայի համար կարևորել է կրթությունը և մասնագիտական ձեռքբերումները: Ինքնաիրականացման բարձր մակարդակ է նկատվել նաև այն կանանց մոտ, ում ամուսինները կայացած են իրենց մասնագիտական գործունեության մեջ:

Ինքնիրականացման ցածր մակարդակի վրա են գտնվում այն կանայք, ում ընտանեկան կյանքը (համաձայն հարցաթերթիկից ստացված տվյալների) մշտապես լի է կոնֆլիկտներով և կանգնած է փլուզման եզրին:

Այսպիսով ընդհանրացնելով ստացված տեսական և փորձարարական տվյալները կարելի է ասել, որ կնոջ մասնագիտական ինքնիրացման, անձնային աճի համար կարևոր գործոն է հանդիսանում մարդու կենսագործունեության կարևորագույն ոլորտներից մեկը՝ ընտանիքը:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Նալչաջյան Կ. Ընտանեկան կյանքի փակ էջերը. Եր., 2003, էջ. 98:
2. Панкратова М.Г. Русская женщина сегодня // Женщины России, Россия 1994. СС. 50–57.



3. *Сартр Ж.-П.* Экзистенеионализм – это гуманизм // Сумерки богов. М.: 1989. С. 333.
4. *Цимбалюк И.Н.* Психологические составляющие дисгармонии супружеских пар // Психология зрелости и старения. 2008. № 1. С. 36.
5. *Турецкая Г.В.* Страх успеха психологическое исследование феномена/психологический журнал СПб 1998. Т. 19, № 1. СС. 37–46.
6. *Берн Э.* Трансакционный анализ и психотерапия. СПб. Изд-во «Братство», 1992.
7. <http://mirznanii.com/info/psikhologiya-karery-zhenshchiny>

## ПРОБЛЕМА САМОРЕЛИАЗАЦИИ ЖЕНЩИН В ПРОФЕССИОНАЛЬНОЙ И В СЕМЕЙНОЙ СФЕРАХ

*А.А. Арутюнян*

### АННОТАЦИЯ

В данной научной статье рассматривается взаимосвязь профессиональной и семейной сфере и его влияния на самореализации женщин, а также разные теоретические подходы, проводилось эксперимент.

**Ключевые слова:** самореализация, профессиональное деятельность, семья, женщина.

## THE PROBLEM OF SELF-REALIZATION OF WOMEN IN PROFESSIONAL AND FAMILY AREA

*H. Harutyunyan*

### SUMMARY

In this article examines the interrelationship between family and professional sectors on the self-realization process. Discussed a range of theoretical approaches and was conducted research.

**Keywords:** self-realization, professional activity, family, woman.

## ԱՆՁԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

*Ն.Ռ. Հակոբյան, Ա.Գ. Խաչատրյան*

### ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածը ներկայացնում է սոցիալական միջավայրում անձի ինքնության սոցիալ-հոգեբանական դրսևորումների ուսումնասիրությունը: Շեշտադրվում է «ինքնություն» եզրույթի միջդիսցիպլինար բնույթը և սոցիալական ինքնության՝ որպես անձի՝ հասարակության հետ փոխգործոնությունների մեխանիզմի գոյության փաստը: Բացահայտվում է սոցիալական միջավայրի ձևավորման և գոյության անձնային հատկանիշները:

**Հիմնաբառեր**՝ սոցիալական միջավայր, սոցիալական ինքնություն, Ես-կոնցեպցիա, կոնֆլիկտ, վարքագիծ:

Սոցիալ-հոգեբանական ուսումնասիրության հայեցակետից ինքնության հասկացությունը հանդես է գալիս անձի՝ որևէ ավարտուն սոցիալական համակարգին պատկանելության մեջ, անձի այն գիտակցման մեջ, որ նա ներկայանում է այդ համակարգի մի մաս և, գրավում է այնտեղ որոշակի դիրք: Այդ հասկացությունն արտահայտվում է տարբեր առանցքային հարցադրումների միջոցով. ինչպե՞ս է անձը ճանաչում իր միջավայրը, ի՞նչ գլխավոր համեմատականներ է տանում հարազատ և օտար միջավայրերի միջև և ո՞ր չափանիշների շնորհիվ է նույնականացնում իրեն տվյալ միջավայրի հետ: Այսպիսով, սոցիալ-հոգեբանական դիտարկման շրջանակներում անձի ինքնության հասկացությունը «պատվում է» սոցիալական նշանակությամբ և դառնում առանձին ուսումնասիրության առարկա: Անձի սոցիալական ինքնության երևույթի մեջ խտացված կերպով կարող են արտահայտվել անձի գոյության և գործունեության այնպիսի յուրահատկությունները, որոնք էլ կվկայեն սոցիալական ինքնության և գիտակցության տարբեր կողմերի մասին:

«Ինքնության» հասկացությունը կրում է միջդիսցիպլինար բնույթ: Նրա ուսումնասիրության շրջանակը ձևավորվել է ընդհանուր հոգեբանական և սոցիալ-հոգեբանական հետազոտություններում:

Գիտական ասպարեզում «ինքնություն» եզրույթի կիրառումը տարածում է գտել Է. Էրիքսոնի շնորհիվ [11]: Այդ եզրույթին է հարում Զ. Ֆրեյդի կողմից շրջանառվող «նույնացման» հասկացությունը, որը նա բնորոշել է որպես անձանց միջև էմոցիոնալ կապի արտահայտում [7; 8]: Սոցիալ-հոգեբանական գրականության մեջ այդ եզրույթի բովանդակային շեշտը դրվում է սոցիալական կողմի վրա:

Հարկ է նշել նաև Է. Ֆրոմմի [9] և Կ.Գ. Յունգի [12] աշխատությունները: Է. Ֆրոմմն առաջիններից է «ինքնության» - եզրույթը քննել սոցիալական

ինքնության շրջանակներում: Նաիր «Берство от свободы» աշխատության մեջ ցույց է տվել ինքնության կապը որոշակի պատմական փուլերի հետ, ինչը նոր խոսք էր սոցիալ-հոգեբանության մեջ:

Ինքնության հետագա ուսումնասիրությունները իրենց զարգացումն են գտել միջիմբային հարաբերությունների հոգեբանության մեջ: Նշանակալի ներդրում է կատարել սոցիալական ինքնության կոնցեպտը Ա. Թեջֆելի կոցմից և Ջ. Թերների ինքնակատեգորիզացիայի տեսությունը [13]: Ա. Թեջֆելը իր տեսության հիմքում առաջ էր քաշում սոցիալական որոշակի հանրույթի գաղափարը, որն ուներ անձնային և սոցիալական հակադիր մակարդակների փոխգործողությունների հնարավորություններ: Ջարգացնելով սոցիալական ինքնության Ա. Թեջֆելի մոտիվացիոն տեսությունը, Ջ. Թերները ներմուծել է ինքնակատեգորիզացիայի կոգնիտիվ տեսությունը՝ հիմնված եռաստիճան, փոխադարձ հակադիր կատեգորիաների վրա՝ համամարդկային, սոցիալական և անձնային:

Ինչպես տեսնում ենք, անձի սոցիալական ինքնության երևույթի լուսաբանումը հոգեբանական գրականության մեջ հանգում է, ընդհանուր առմամբ, անձի՝ հասարակության հետ փոխգործողությունների բացահայտմանը: Այն կարող է ներկայացվել որպես հասարակության մեջ անձնային զարգացման դրսևորումներից մեկը: Դատելով խնդրի միջոյցիայլինար էությունից, կարող ենք փաստել բազմաթիվ գիտական վկայությունների մասին, որոնք այս կամ այն կերպ առնչվում են սոցիալական միջավայրում անձի ինքնության սոցիալ-հոգեբանական հարցադրումներին:

Խնդրի բացահայտման գիտամեթոդաբանական մոտեցումներից նշենք Հոլդշտեյնի և Հեկհաուզենի հայացքները [10]: Այսպես, անձի ինքնության երևույթը կարելի է հասկանալ անձի ինքնառեալիզացիայի շրջանակներում: Խնդրի այդ կողմին անդրադարձել է Հոլդշտեյնը, համաձայն որի հայացքների՝ շրջակա աշխարհը դադարում է հանդես գալ լոկ որպես ինքնառեալիզացիայի համար խոչընդոտների աղբյուր, այլ, ընդհակառակն, ներ է առնվում իր դրական սահմանման մեջ, երբ անհատը գտնվում է աշխարհի նկատմամբ «ադեկվատ հարաբերության մեջ»: Ինքնառեալիզացիան առկա է, երբ անհատը ընդունակ է կատարել այն, ինչը պահանջում է իրենից աշխարհը»: Այս դիրքորոշումը հուշում է անձի ինքնության՝ որպես շրջապատում անձի իքնադրսևորման և ներկայացման փաստի մասին:

Համաձայն Հ.Հեկհաուզենի կարծիքի, անձի ինքնառեալիզացիային և ինքնահաստատմանը նպաստում է նվաճման մոտիվացիայի իրագործումը: Մեր խնդրին է առնչվում հատկապես մոտիվացիայի այն շեշտադրումը, որը վերաբերում է գերբնական աշխարհի հետ փոխգործողություններին, նրանից ակնկալվող որևէ արդյունքին և, իր հերթին, այդ աշխարհին ուղղվող անձի հարցադրումներին: Անձի ինքնությունը, այդպիսով, նպատակաուղղվում է ցանկալի արդյունքի ապահովմանը: Դա մոտիվացիայի այն ձևն է, որն անձի կողմից ակնկալում է որպես նվաճում [3, էջ. 47–49; 5]:

Ինչպես տեսանք, «ինքնություն» հասկացությունը լայն կիրառում է ստացել հոգեբանության, ազգաբանության, սոցիալական և մշակութային մարդաբանության մեջ: Ընդհանուր առմամբ այն նշանակում է որևէ օբյեկտի կամ սուբյեկտի՝ որևէ այլ օբյեկտին կամ սուբյեկտին պատկանելիության գիտակցումը որպես մասը՝ ամբողջին [6, էջ 154]: Կախված ուսումնասիրության նպատակներից, կարելի է առանձնացնել «ինքնության» եզրույթի անձնային կամ սոցիալական կառուցվածքային բնութագրումները: Հոգեբանության մեջ անձնային ինքնությունը արտահայտում է այն բնութագրականների համակցվածությունը, որի շնորհիվ նաարտահայտում է իր յուրահատկությունը: Սոցիալական ինքնությունը միտված է անձին նույնականացնելու սեփական սոցիալական միջավայրի նորմերի և արժեհամակարգի հետ: Ակնհայտ է, որ ինքնության այդ երկու մակարդակները միահյուսված են և ներկայանում են իրենց փոխկապակցվածության մեջ: Չէ որ անձի պատկերացումներն իր մասին որոշակի սոցիալական նորմերի յուրացման արդյունք են: Ուստի, «ինքնության» եզրույթը փոխկապակցվում է սոցիալականացման գործընթացով, որի շնորհիվ ի հայտ է գալիս անձի ձևավորված«ես-կոնցեպցիան»: Այսպիսով, ինքնության անձնային և սոցիալական մակարդակները միտված են բացահայտելու անձի «ես-կոնցեպցիայի» յուրահատկությունները [1]:

Անձի սոցիալական ինքնության ձևավորման վրա ազդում են մի շարք գործոններ, որոնք պայմանավորված են սոցիալական շրջապատի և, մասնավորապես, միջխմբային հարաբերությունների յուրահատկություններով, որոնք կարող են նպաստավոր լինել անձի սոցիալական ինքնության գիտակցմանը:

Սոցիալական միջավայրը ձևավորվում և գոյություն է ունենում անհատների սոցիալական փորձի ենթատեքստում: Ներխմբային տեսանկյունից սոցիալական միջավայրը հիմնավորվում է խմբի սոցիալ-հոգեբանական, մշակութային, ազգային և այլ գծերի համալիրի վրա, որոնցով այդ խմբի անդամները տարբերում են իրենց այլ՝ նույնիսկ սոցիալ-հոգեբանական առումով մոտիկ, խմբերից: Նշենք օտար խմբերի վերաբերյալ պատկերացումների ընդհանուր միտման մասին, երբ խմբի մասին արտաքին պատկերացումները ամբողջացվում են և բնութագրում են խումբը կարծրատիպերի միջոցով: Այլ խոսքերով, խմբի ներքին և արտաքին սահմանումներում ներկա են թե օբյեկտիվ, և թե սուբյեկտիվ չափանիշներ:

Սոցիալական միջավայրի գոյության առաջնահերթ պայման է «մենք-նրանք» դուալ հակադրությունը: Սոցիալական միջավայրի սահմանները սկզբնավորվում են անհատների անտրոպոլոգիական հատկանիշների ինքնանույնականացմամբ: Գենետիկական և սոցիալական միասնության բնութագրականները, այսպիսով, տարբերում են «մեզ» «այլոցից» և ձևավորում անձի սոցիալական ինքնության առանցքը: Այն գոյություն չունի համեմատությունից և կոմունիկացիայից դուրս: Միայն այլ խմբի հետ փոխգոր-

ծողության ընթացքում կարող է արտահայտվել սեփական Ես-իյուրահատկությունը: Այլ խոսքերով, «Մենք-այլոք» համեմատությունը ներկայանում է որպես սոցիալական միջավայրի կայուն հատկանիշ և տարբեր խմբերի փոխգործողությունների ժամանակ ստանում տարբեր բնութագրականներ՝ ազգային, լեզվական, մշակութային և այլն: Այդ պատճառով էլ սոցիալական ինքնությունը կարող է պահպանվել նույնիսկ առանց ընդհանուր լեզվի և տարածքի, ինչպես դա տեսնում ենք գնչուների մոտ, որոնք պահպանում են իրենց ինքնությունը՝ շնորհիվ այլ ժողովուրդների հետ համեմատության և իրենց յուրահատկության գիտակցության:

«Մենք-այլոք» հակադրությունը ենթադրում է յուրային և օտար խմբերի միջև որոշ տարբերությունների, հակասությունների, նույնիսկ, կոնֆլիկտների առկայություն, այնուամենայնիվ, ոչ միշտ նրանք կարող են հիմք հանդիսանալ անկայուն սոցիալական ինքնության առաջացման համար: Տարբերությունները և հակասություններն ինքնին չեն առաջացնում անձի ինքության ներքին կոնֆլիկտ: Խոսքը վերաբերում է այն տարբերություններին ու հակասություններին, որոնք անհամատեղելի են անձի ընդհանուր կողմնորոշման, մոտիվացիայի, արժեքների, պահանջմունքների հետ և կարող են ստեղծել տագնապ, անհանգստություն, այլընտրանքային իրավիճակ: Հակասությունը ոչ միշտ է վերածվում կոնֆլիկտի, բայց ամեն մի կոնֆլիկտի հիմքում ընկած է լինում որոշակի հակասություն: Կոնֆլիկտն էլ, որպեսզի դառնա սոցիալական միջավայրի փոփոխության ցուցանիշ, պետք է վերածվի սոցիալ-հոգեբանական իրողության: Դրա համար անհրաժեշտ է գիտակցական մակարդակում տեղի ունենա կոնֆլիկտային իրադրության սուբյեկտիվ կերպարի նույնացումը: Նույնացումը ծագում է այն ժամանակ, երբ մարզինալ անձը իր անհաջողությունների պատճառ համարում է ուրիշ մարդուն: Դրանից հետո ձևավորվում է կոնֆլիկտային իրադրության սուբյեկտիվ պատկերը: Հոգեբանական կոնֆլիկտը պարտադիր ուղեկցվում է ապրումների առատությամբ: Հայտնվելով կոնֆլիկտային իրադրության մեջ, մարդիկ սկսում են ապրումներ ունենալ, ընդամին, հիմնականում բացասական ապրումներ՝ զայրույթ, վախ, գրգռվածություն, լարվածություն, անզսպություն, ատելություն, թշնամություն, անբավարարվածություն և այլն: Հոգեբանական կոնֆլիկտի ժամանակ տեղի են ունենում ինքնաընկալման, իրադրության ու մրցակիցների պատկերների աղավաղում, աննձնային բնույթի տարբեր ձևախեղումներ: Կոնֆլիկտն ուղեկցվում է դիմակավորման տարբեր դրսևորումներով: Առանձնացվում են կոնֆլիկտային վիճակի ընկալման աղավաղման հետևյալ տիպերը.

ա) Կոնֆլիկտային վիճակի աղավաղում ամբողջությամբ: Դա տեղի է ունենում այն դեպքում, երբ կոնֆլիկտին մասնակից անձը հնարավորություն չունի կամ ի վիճակի չէ աղեկվատ ձևով գնահատելու իրավիճակը, երբ իրավիճակը ընկալվում է բացառապես սև-սպիտակ գույներով, երբ տրվում են կատեգորիկ գնահատականներ, որոնք ենթակա չեն վերանայման, երբ

ինֆորմացիան ընկալվում և մեկնաբանվում է սեփական նախահամոզումնքներին համապատասխան:

բ) Կոնֆլիկտում վարքագծի մոտիվների ընկալման աղավաղում: Սեփական մոտիվացիան որպես կանոն ստանում է խրախուսական բնույթ (պայքար արդարության վերականգնման համար, պատվի և արժանապատվության պաշտպանություն և այլն): Սեփական ձգտումները համարվում են առաքինի, նպատակները՝ վեհ, ուստի սուբյեկտը իրեն համարում է իրավացի: Իսկ հակառակորդի մոտիվները գնահատվում են որպես բացասական ու անբավարար:

գ) Գործողությունների, մտքերի, արարքների ընկալման աղավաղում: Սեփական դիրքորոշումը մեկնաբանվում է որպես նորմատիվորեն հիմնավորված և նպատակահարմար: Պատասխանատվությունը կարող է ընկալվել տարբեր կերպ՝ «Ես ամեն ինչ ճիշտ եմ անում», «Ես ստիպված եմ այդպես անել» և այլն:

դ) Անձնային որակների ընկալման աղավաղում: Սովորաբար մարդն իրեն բնութագրելիս առանձնացնում է դրական հատկությունները և անտեսում բացասական, անհաճո հատկությունները: Իսկ հակառակորդի անձնային հատկություններից շեշտվում են միայն բացասականները, որոնք էլ դառնում են ծաղրանքի, վիրավորանքի առարկա [4]:

Այսպիսով, անձնային մակարդակի վրա սոցիալական ինքնության հատկանիշը ներ է առնվում սոցիալական «Ես»-ի կառուցվածքի մեջ, կախված է լինում այն բանից, թե ինչպես է անձը բնորոշում ինքն իրեն: Ուստի, սոցիալական միջավայրը կարևոր տեղ է զբաղեցնում անձնային բնութագրականների կառուցվածքում: Ընդորում, կոնֆլիկտային, ոչ ստաբիլ իրավիճակում սոցիալական «Ես»-ի նշանակությունն էականորեն մեծանում է, իսկ սոցիալական կայունության պայմաններում՝ հակառակը, թուլանում է՝ տեղիք տալով զուտ սոցիալական բնութագրականներին: Անձի սոցիալական ինքնության անկայունությունը ենթադրում է նաև ընդհանրական Ես-կոնցեպցիայի, Ես-կերպարի փլուզում և բազմաթիվ Ես-կոնցեպցիաների ու կերպարների առկայություն, որի հետևանքով խախտվում է դրանց տարրերի միասնությունն ու ներդաշնակությունը, առաջանում է տարբեր կարգի էմոցիոնալ, իմացական, բարոյական, էթնիկական և վարքագծային դիտանանքներ: Այս իմաստով ուշադրությանկենտրոնումեն դառնում հատկապես այն մարդիկ, որոնց ընդհանրական Ես-կոնցեպցիան աչքի չի ընկնում իր ներքին միասնությամբ ու անհակասականությամբ [2]:

Անձի սոցիալական ինքնությունը ներ է առնում նաև մշակութային և նշանային կողմերը: Ժամանակակից հասարակությունը բաղկացած է մշակույթի տարբեր բնագավառներից, որոնց սահմանները որոշվում են ոչթե տարածքով կամ պետության առկայությամբ, այլ կոմունիկացիոն համակարգերի հնարավորություններով:

Իր զարգացման աստիճանով հասարակությունը դառնում է ավելի

կառուցողական, իր մեջ սկսում է խորանալ սոցիալական դիֆերենցիացիան, իսկ տարբերությունները առաջնահերթ են դառնում նմանությունների համեմատ և այդ պայմաններում մշակույթը սկիզբ է ծառայում համատեղ նշանային միջավայրի համար: Էթնիկական խմբի բոլոր անդամների համար հասկանալի և համընդհանուր նշանային համակարգի ներդրումը նպաստում է մշակութային համախմբվածությանը տվյալ էթնիկական խմբի սահմաններում և խմբի անդամների կողմից իրենց անդամակցության գիտակցմանը:

Ելնելով վերը նշվածից, անձի սոցիալական ինքնությունը կարող է սահմանվել որպես անձի հիմնական բնութագրական, որը կայանում է տվյալ խմբին կամ հանրությանը անձի պատկանելիության զգացումի մեջ և նախկինում է այդ խմբի սոցիալական ընդհանրության գենետիկական սոցիալական հիմքով: Այն արտահայտվում է «մենք»-ի «այլոց»-ի հետ համեմատության մեջ այլ սոցիալական միջավայրի հետ փոխգործողության և փոխհարաբերությունների ընթացքում:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Նալչաջյան Ս.Ս. Էթնիկական հոգեբանություն, Եր., 2001:
2. Бернс Р. Что такое Я-концепция, В кн.: «Психология самосознания». Хрестоматия, Самара, 2000. СС. 334–335.
3. Гордеева Т.О. Мотивация достижения: теории, исследования, проблемы. СС. 47–49.
4. Журавлев А.Л., Вахин А.А. Социально-психологические аспекты исследования конфликта, в кн.: Современная конфликтология в контексте культуры мира, М., 2001.
5. Леонтьев Д.А. (ред.). Современная психология мотивации, М., 2002.
6. Садохин А.П., Грушевицкая Т.Г. Этнология, М., 2000. С. 154.
7. Фрейд З. Тотем и табу. Психология первобытной культуры и религии, М., 1991.
8. Фрейд З. Введение в психоанализ: Лекции. М., 1989.
9. Фромм Э. Бегство о свободы. М., 2011.
10. Хекхаузен Х. Мотивация и деятельность. Т. 1. М., 1986.
11. Эриксон Э. Идентичность: юность и кризис. М., 1996.
12. Юнг К.Г. Архетип и символ, М., 1991.
13. Tajfel H. and Turner J.C. The social identity theory of inter-group behavior, In S. Worchel and L. W. Austin (eds.), Psychology of Intergroup Relations, Chicago: Nelson-Hall, 1986.

#### ХАРАКТЕРИСТИКА ИДЕНТИЧНОСТИ ЛИЧНОСТИ В СОЦИАЛЬНОЙ СРЕДЕ

*Н.Р. Акобян, А.Г. Хачатрян*

#### АННОТАЦИЯ

Данная научная статья представляет исследование социально-психологических проявлений идентичности личности в социальной среде. Указывается междисциплинарный характер термина «идентичность» и факт существования социальной идентичности в качестве механизма взаимодействия личности с обществом. Выявляются

также личностные признаки формирования и существования социальной среды.

**Ключевые слова:** социальная среда, социальная идентичность, Я-концепция, конфликт, поведение.

## CHARACTERISTIC OF PERSONAL IDENTITY IN A SOCIAL ENVIRONMENT

*N. Hakobyan, A. Khachatryan*

### SUMMARY

This article presents the investigation of socio-psychological displays of personal identity in a social environment. The interdisciplinary feature of the term “identity” and the social environment as the cooperation mechanism between society and a person are pointed out as well. The personal features of the social environment’s formation and existence are revealed.

**Keywords:** Social environment, social identity, I-concept, conflict, behavior.



ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ  
ՈՐՊԵՍ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

*Ե.Լ. Հովհաննեսյան, Գ.Ա. Խաչիկյան*

ԱՄՓՈՓՈՒՄ

Բուհական համակարգում կատարվող փոփոխությունները մեծ ազդեցություն են ունենում ուսանողների, նրանց խմբերում բարոյահոգեբանական մթնոլորտի և արժեհամակարգի վրա: Խիստ կարևոր է դրանց հոգեբանական առանձնահատկությունների, պատճառների բացահայտումը, որն իր ազդեցությունն է թողնում կրթական գործընթացի, կրթության նկատմամբ վերաբերմունքի և հետագայում ուսանողի մասնագիտական կայացման վրա: Անձի արժեքային համակարգի ձևավորումը առկա է տարիքային բոլոր փուլերում:

**Հիմնաբառեր՝** արժեհամակարգ, բարոյական նորմ, արժեք, արժեքային կողմնորոշում, սոցիալականացում, բարոյական գիտակցություն:

Մեր հանրապետությունում կրթական բարեփոխումների ազդեցություններին, դրանց հետևանքներին և հատկապես ժամանակակից ուսանողությանը վերաբերյալ հոգեբանական բնույթի հետազոտություններն այժմ խիստ կարևորվում են: Բուհական համակարգում կատարվող փոփոխությունները մեծ ազդեցություն են ունենում ուսանողների, նրանց խմբերում բարոյահոգեբանական մթնոլորտի և արժեհամակարգի վրա: Խիստկարևոր է դրանց հոգեբանական առանձնահատկությունների, պատճառների բացահայտումը, որը իր ազդեցությունն է թողնում կրթական գործընթացի, կրթության նկատմամբ վերաբերմունքի և հետագայում ուսանողի մասնագիտական կայացման վրա: Անձի արժեքային համակարգի ձևավորումն առկա է տարիքային բոլոր փուլերում: Դեռահասի, պատանու, երիտասարդի բարոյահոգեբանական արժեքների ձևավորմանը նպաստում են ընտանիքը, դպրոցը, ԲՈՒՀ-ը և ողջ սոցիալական միջավայրը: Ուստի հենց իրենքել պետք է հստակ իմանան իրենդ դերը և նշանակության կարևորությունը, որպեսզի կարողանան ժամանակին կանխել անձի արժեքային համակարգում նկատվող այլափոխումները: Այժմյան երիտասարդությունը, ուսանողությունը ապրում է արդեն ուրիշ իրականությունում, ոչ նրանում, որում ապրել է անցյալ սերունդը: Նա զարգացել է անկախ պետության փոփոխությունների դարաշրջանում և ճգնաժամային պայմաններում և ունի այլ աշխարհընկալում: Անտեսելով ուսուցման դժվարին իրավիճակը, որը դժվարացել է վերջին 10 տարում՝ դառնալով մեր երկրի ճգնաժամային իրադրության վկան, երիտասարդները շարունակում են զբաղվել գիտությամբ, սպորտով, ստեղծագործական աշխատանքով: Կա նաև դրա հակառակ

կողմը՝ հանրապետությունում աճող սոցիալ երևույթների առաջացումն ուսանողական միջավայրում, որոնք են նարկոմանիան, ծխելը, ալկոհոլից կախումը, ՄՊԻԴ-ով վարակումը [4]: Արժեքային կողմնորոշումը հասարակական արժեքների՝ վարքի, նորմերի, իդեալների նկատմամբ անձի ընտրողական վերաբերմունքն է, որը ձևավորվում է նրա սոցիալականացման գործընթացում: Արժեքային կողմնորոշում հասկացությունը կրում է փիլիսոփայական, մշակութային և հոգեբանական բնույթ: Արժեքներն առանց բացառության բնորոշ են բոլորին՝ անկախ սեռից, մասնագիտությունից, տարիքից, ազգությունից, ռասայից: «Արժեք» հասկացությունը իրենից ներկայացնում է օբյեկտներ, երևույթներ, դրանց հատկություններ, վերացական գաղափարներ, որոնք իրենց մեջ ներառում են հասարակական իդեալներ և ներկայանում որպես անհրաժեշտության չափանիշներ: Եթե մեկը խախտում է հասարակության կողմից ընդունված նորմը, նրա վարքը անվանվում է հակահասարակական: Մարդն իր ծնված օրից ձեռք է բերում դրական կամ բացասական արժեքներ, որոնք սոցիալականացման ընթացքում ուղղորդում են անձի վարքը՝ առաջ բերելով սոցիալական դիրքորոշումներ: Սոցիալականացումը և արժեքային կողմնորոշումները սերտորեն փոխկապակցված են որպես դինամիկ համակարգեր: Սոցիալականացման գործընթացում մարդ ձեռք է բերում վարքի նորմեր, համոզմունքներ, կանոններ [5]:

Շատ գիտնականների /Վ.Դ. Շադրիկովի, Ս.Լ. Ռուբինշտեյնի, Վ.Վ. Դավիդովի, Դ.Ս. Լեդենցովի/ ուսանողների արժեքային համակարգի ուսումնասիրությանն ուղղված հետազոտությունները վկայում են այն մասին, որ այն առանձնանում է պրագմատիկ արժեքներով և արժեքային կողմնորոշմամբ: Ուսանողների բարոյական զարգացում համապատասխանում է ինտելեկտուալ զարգացման մակարդակի հետ, բարոյական իրավիճակի ընտրությունը կապված է ուսանողի սպեցիֆիկ արժեքների արդիականությամբ: Հեղինակները նշում են, որ ուսանողի բարոյական գիտակցության առաջացման պատճառն ինքնորոշման ձգտման և «շուկայական արժեքների» միջև գերակշռությունն է: Խոսքը վերաբերում է ուսանողների իդեալական պատկերացումների բարձր աստիճանի մասին, որոնք կապված են սոցիալական կյանքի ռեալության հետ: Պետք է նշել, որ ուսանողի բարոյական զարգացումը հաճախ համապատասխանում է նրա մասնագիտական կայացման յուրահատկության հետ [6]:

Բարոյական գիտակցության զարգացման մասին իրենց տեսակետներն ունեն նաև Լ.Ն. Անտիլոգովիչը, Ա.Ս. Արխանգելսկովը, Դրոբնիցկովը, Վեսելովը, Բրատուսյան և այլք: Նրանք առանձնացրել են բարոյական նորմերի և արժեքների, իդեալների, չարի և բարու, խղճի և ճշտի, արդարության և այլնի արժևորումը: Լ. Անտիլոգովան բնութագրել է բարոյական նորմերի վերաբերյալ, նրանց ազատ ընտրությունն իրենց պարտքի, գնահատման վերաբերյալ մոտեցումները [2]: Հոգեբանական գիտության ժամանակակից էտապի զարգացումը բնութագրվում է հոգեբանության և էթիկայի գիտական

հետազոտությունների ոլորտների մերձեցմամբ: Դրանց վառ օրինակները կարող են լինել այնպիսի միջգիտական ոլորտների և ուղղությունների զարգացումը, ինչպիսիք են «Բարոյական հոգեբանություն» (Բ.Ս. Բրատուս), «Հոգեբանություն բարոյականության» (Վ.Վ. Դավլիդով): Ինքը՝ անձնավորությունը, հասկացվում է որպես բարոյական կատեգորիա (Լ.Ս. Արխանգելսկի, Դ.Բ. Սլաբոդչիկովի), իսկ բարոյական կողմնորոշումը՝ որպես չափանիշ և անձնային առողջության արտացոլում (Վ.Դ. Շադրիկով): [3]

Նշանավոր հոգեբան Լ.Ս. Վիգոտսկին գտնում էր, որ յուրաքանչյուր տարիքում ծագում է անձի զարգացումը պայմանավորող հանգամանքների ամբողջություն զարգացման տարբեր իմաստով: Ելնելով դրանից պետք է իմանալ կրտսեր, դեռահասության պատանեկության տարիքներում բարոյականության ինչպիսի որակներ, արժեքներ և նորմեր զարգացնել և ձևավորել նրանց մեջ: Բարոյական զարգացումը դիտարկենք տարիքային տարբեր փուլերում:

Կրտսեր դպրոցական տարիքում բարոյական զարգացման առանցքը կարող են հանդիսանալ այն նորմերը որոնք իրենցից ներկայացնում են համամարդկային արժեքներ: Այս տարիքում բարոյական զարգացման, արժեքների ձևավորման հիմք կարող են հանդիսանալ երեխաների մեջ հասարակական հարաբերությունների, միջանձնային հարաբերությունների ձևավորման նախադրյալների ստեղծումը: Հենց այդ տարիքում է երեխան հասկանում, որ չի կարող հասարակությունից մեկուսի ապրել: Գերմանացի փիլիսոփա Ա. Շոպենհաուերն ասու մեր. «Մենավոր մարդը թույլ է, ինչպես լքյալ Ռոբինզոնը...»: Այս տարիքի երեխաների մոտ պետք է զարգացնել նաև արարքների համար պատասխանատվության կրելու սկզբունքը, որպեսզի նրանք հասկանան և գիտակցեն, որ ոչ մի արարք անպատիժ չի մնում, հետևաբար, դաստիարակվեն հասարակական նորմերին և կանոններին համահունչ:

Դեռահասության տարիքում արդեն երեխայի շփման մակարդակը մեծանում է՝ դպրոց, բակ, հասակակիցների միջավայր, սպորտային խմբակներ, որի ընթացքում երեխան ձեռք է բերում փորձ հասարակական վարքի մոդելներն ու ձևերը յուրացնելու ուղղությամբ: Իրեն ծանոթ մարդկանց միջավայրում փնտրում է իդեալ: Փորձում է նմանակել մեծերին, դրսևորել նրանց վարվելաձևը, շարժումները: Բարոյական արժեքների ձևավորման գործընթացում մեծ դերակատարում ունեն ծնողները, մանկավարժները: Հենց այդ տարիքից սկսած երեխաներին պետք է ծանոթացնել հոգևոր, ազգային, մշակութային արժեքների հետ: Պետք է կազմակերպել բարոյականության վերաբերյալ բազմաթիվ դասընթացներ, էքսկուրսիաներ, միջոցառումներ:

Պատանեկության տարիքում դպրոցականների բարոյական դաստիարակությունը, արժեքների ձևավորումը այլ ընթացք է ստանում. այդ տարիքում ձևավորվում է նրանց հայացքները, տեսակետները: Նրանք

արդեն հասկանում են բարոյական հասկացությունների իմաստը, կարևորում բարոյական նորմերի և արժեքների դերը: Այս տարիքում արդեն բարոյականության թեմայով պետք է կազմակերպել բանավեճեր, դասախոսություններ: Հենց այս տարիքում է դրվում արժեքային համակարգի ձևավորման հիմքը, այն թեև հետագա տարիներին փոփոխության է ենթարկվում, սակայն կարևոր է, որ պատանին իմանա, ինչ է հայրենիքը, ընտանիքը, ընկերությունը, ազնվությունը, անկեղծությունը, խիղճը, բարությունը [1]:

Անձի բարոյական գիտակցության կառուցվածքում առանձնացվում է երեք կոմպոնենտներ՝ կոգնիտիվ, հուզական, վարքային:

Կոգնիտիվային բաղադրատարրը ներառում է բարոյական պատկերացումները, իմացում, հասկացում, սկզբունքներ, արժեքներ, անձի սեփական բարոյական որակների և պահվածքի գիտակցական աստիճան:

Հուզական բաղադրատարրն իրենից ներկայացնում է դրական կամ բացասական զգացում օբյեկտի նկատմամբ, հուզաարժեքային վերաբերմունք բարոյական նորմերի նկատմամբ, վերաբերմունք իր նկատմամբ, ինքնազնահատականը հուզական գնահատում միջանձնային հարաբերությունների նկատմամբ:

Վարքային կոմպոնենտությունը իր մեջ ներառում է անձի վերաբերմունքն ու պատասխանատվությունը իր վարքի խղճի նկատմամբ [4]:

Այսպիսով, բարոյական զարգացումն ու արժեքային համակարգի ձևավորումը բնորոշ է տարիքային բոլոր խմբերին և կազմում է անձի զարգացման հիմքը: Այն տարիների ընթացքում փոփոխման է ենթարկում և աստիճանաբար կատարելագործվում է: Դրա ձևավորմանը նպաստում են կամ խոչընդոտում են շրջապատում տեղի ունեցող բարոյահոգեբանական փոփոխությունները, սոցիալ-տնտեսական պայմանները և այլ գործոններ:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Ամիրջանյան Յու., Ս.Սահակյան:* Մանկավարժություն, Եր. 2005:
2. *Антилогова Л.Н.* Нравственная мотивация и ее роль в саморегуляции поведения личности // Проблемы психологии мотивации: Сб. научных трудов по материалам научно-практич. конфер. Новосибирск: Изд-во НГПУ, 2005. С. 32.
3. *Ольховский.* Воспитание студенческой молодежи. Ленинград 1963. С. 56.
4. *Поварница.* Исследование связанных ценностных с выбором профессии студентов пед-вызов.М., С. 349.
5. *Хоруженко К.М.* Культурология энциклопедический словарь Ростов на Дону 1997. С. 533.
6. *Шадриков В.Д.* Педагогическая поддержка профессионального самоопределения старшеклассников. М.: ВЕКС, 1998. 165 с.
7. [www.psychology-armenian.narod.ru](http://www.psychology-armenian.narod.ru)

**МОРАЛЬНЫЕ ЦЕННОСТИ В СИСТЕМЕ ЦЕННОСТНЫХ КАЧЕСТВ  
СТУДЕНТОВ КАК ПРОБЛЕМА ПСИХОЛОГИЧЕСКОГО ИССЛЕДОВАНИЯ**

*Е.Л. Оганесян, Г.А.Хачикян*

**АННОТАЦИЯ**

В данной научной статье обсуждаются условия нравственного и морального воспитания личности. Особенно акцентируется необходимость системного подхода к данной проблеме, где подчеркивается первичность исследования личности младшего школьного возраста, подростков, юношей, ценностных ориентаций и учебной мотивации с целью разработки и реализации мероприятий, направленных на профилактику и преодоления неблагоприятных развитий в данных областях.

**Ключевые слова:** ценностная система, нравственная норма, ценность, ценностная ориентация, социализация, нравственное осознание.

**THE MORAL VALUES IN THE VALUES SYSTEM OF STUDENTS AS THE  
SUBJECT OF PSYCHOLOGICAL RESEARCH**

*E. Hovanesyanyan, G. Khachikyan*

**SUMMARY**

The article reveals the psycho-pedagogical conditions of morals. Special attention must be paid to the importance of the usage of systemized teenagers' interpersonal and referent relationships, quality orientations and priority of research of educational motivation in the mentioned spheres with the purposes of preventing unfavorable developments and working out and realizing overcoming activities.

**Keywords:** system of values, moral norm, value, value orientation, socialization, moral consciousness.

**ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՎԱԾ ՎԻՃԱԿԻ ԴԵՐՈ ՀՈԳԵԹԵՐԱՊԻԱՅԻ  
ԺԱՄԱՆԱԿ  
(ՀՈԳԵՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)**

*Ռ.Մ. Նաղդյան, Գ.Ս. Եսայան*

**ԱՍՓՈՓՈՒՄ**

Հռոլվածում ներկայացված է արդյունավետ հոգեթերապիայի համար այցելուի գիտակցության փոփոխված վիճակի դերը և ազդեցությունը: Աշխատանքում նաև մատնանշվում են այն հնարավոր ուղիները, որոնց միջոցով կարելի է հասնել այցելուի համար համապատասխան (նպաստավոր) գիտակցության վիճակի ստեղծմանը:

**Հիմնաբառեր՝** հոգեթերապիա, գիտակցության փոփոխված վիճակ, այցելու:

Հոգեթերապևտիկ ուղղություններից, թերևս, ամենաքննարկված՝ միաժամանակ քննադատված, բայցնայնպես, մինչ օրս ամենազդեցիկ ուղղություններից մեկը՝ հոգեվերլուծությունն է: Այդ ուղղության հիմնադիր Զիգմունդ Ֆրեյդը (1856–1939)՝ ով բժիշկ-նյարդաբան էր, աշխատում էր հոգեբանական խնդիրներ ունեցող հիվանդների հետ: Այդ հիվանդներից մեկը, ով ընթերցողին հայտնի է իբրև Աննա Օ. (Բերտա Պապենհեյմ), հիպնոսի ժամանակ դրսևորում էր այնպիսի վարք (նա հիշում էր և բուռն էմոցիոնալ հակազդում տալիս մանկական տարիներին սպրած այնպիսի հիշողությունների, որը չէր հիշում հիպնոսից դուրս գալիս) [4, էջ 39–71], ինչը չէր բացատրվում՝ ելնելով այն ժամանակվա բժշկության սահմաններից: Զ. Ֆրեյդը, հետագայում նկատելով նման վարքի դրսևորումները այլ հիվանդների մոտ ևս [4], «ստիպված» է լինում ստեղծել մի տեսություն, որի շրջանակներում հնարավոր կլիներ բացատրել այդ անբացատրելի վարքի դրսևորումները:

Հոգեվերլուծության իր տեսությունը ստեղծելու ժամանակ Զ. Ֆրեյդը գլխավորապես օգտվում է անգիտակցականի վերաբերյալ տարբեր փիլիսոփաների պատկերացումներից [1, էջ 21, 111], [5, էջ 386], [8, էջ 23], հոգեկանում սեքսուալության դերի առկայությունից [14, էջ 778, 779], հին հունական դիցաբանությունից [2, էջ 546, 561], աստվածաշնչյան հասկացություններից [3, էջ 132] և այլն:

Այդ տեսությունը ամենաբնորոշող դիտարկումը մենք կարող ենք գտնել Զ. Ֆրեյդի աշակերտ Է. Ֆրոմմի մոտ: Նրա համոզմամբ, հոգեվերլուծության գլխավոր սկզբունքը թաքնված է աստվածաշնչյան հետևյալ տողերում. **«Եվ կճանաչեք ճշմարտությունը, և ճշմարտությունը ձեզ կազատի»** [9, էջ 19]: Է. Ֆրոմմի խոսքով, ճշմարտության փրկիչ ուժը ընդհանուր է ոչ միայն

քրիստոնեության, բուրդիզմի և հուդայականության համար, այլ նաև բնորոշ է Սուրբատեսի, Սպինոզայի, Հեգելի և Մարքսի փիլիսոփայությանը [9, էջ 19]:

Եվ իսկապես, հոգեվերլուծության ժամանակ Ջ. Ֆրեյդի ջանքերը ուղղված էին իրականության բացահայտմանը՝ անգիտակցականում տեղի ունեցող գործընթացների գիտակցմանը [11, էջ 388], ինչի արդյունքում այցելուն պետք է ազատվեր հոգեբանական խնդիրներից:

Անգիտակցականում թաքնված գործընթացները հասկանալու համար Ջ. Ֆրեյդը դիմում է նույնիսկ երազների օգնությանը, որոնց միջոցով պետք է բացահայտվեր այցելուի գիտակցությունից թաքնված իրականությունը (հակումներ, ցանկություններ)[13]:

Գիտակցությունից թաքնված անգիտակցական հակումները դուրս հանելու, դրանք ճանաչելու, գիտակցելու համար հեղինակը օգտագործում էր մի շարք տեխնիկաներ, մասնավորապես՝ 1) ազատ ասոցացման ժամանակ այցելուի պատահական մտքերի ուսումնասիրումը, 2) երազների մեկնաբանությունը, 3) սխալ և ախտանշական գործողությունների ուսումնասիրումը և, ինչը շատ կարևոր է, ձ) փոխանցման («перенос») միջոցով առաջացած երևույթների (ինչը տեղի է ունենում հոգեվերլուծության ընթացքում) օգտագործումը [12, էջ 197]:

Այսպիսով, այցելուն գալով հոգեվերլուծողի մոտ, նրա օգնությամբ բացահայտում է անգիտակցականում թաքնված (չգիտակցված) ապրումները և ազատվում հոգեբանական խնդիրներից:

Առաջին հայացքից անթերի գործող այս մոտեցումը այնքան էլ կատարյալ չէ, քանի որ հոգեվերլուծության միջոցով ոչ բոլոր հիվանդներն էին ազատվում իրենց տանջող հոգեբանական խնդիրներից: Ջ. Ֆրեյդը նկատել էր, որ հոգեվերլուծության օգնությամբ չեն կարող բուժվել մելանխոլիայով (դեպրեսիա), պարանոյայով և շիզոֆրենիայով տառապող հիվանդները [10, էջ 415]: Դրա պատճառը այն չէր, որ այդ հիվանդները չունեին մտավոր բավարար կարողություններ, այլ այն, որ նրանք, չնայած այն բանին, որ ցուցաբերում էին ինտելեկտուալ բարձր որակներ, միևնույն ժամանակ չէին հավատում հոգեթերապևտի խոսքերին [10, էջ 421]: Եթե սրան ավելացնենք նաև այն հանգամանքը, որ հոգեվերլուծության ժամանակ հանդիպում են դեպքեր (նկրողի տարբեր դրսևորումներ), որոնք, չնայած այն բանին, որ նպաստավոր են բուժման համար, ոչ միշտ են սպասելի ավարտ ունենում, ապա պետք է խոստովանենք, որ այդ թերապիայում տեղ գտած որոշ սկզբունքային կետեր վերանայման կարիք ունեն:

Փաստորեն, արդեն Ջ. Ֆրեյդը բուժման արդյունավետ ընթացքի համար անհրաժեշտ էր համարում այցելուի կողմից թերապևտի խոսքերի նկատմամբ հավատը [10, էջ 421]:

Ինչ է ստացվում. հոգեվերլուծության կողմից առաջարկվող ճշմարտությունը ճանաչելու համար միայն մտավոր կարողությունները բավարար չեն, անհրաժեշտ է նաև հավատալ դրան: Եվ ամենակարևորը. նման նախապայ-

մանը միայն հոգեվերլուծությանն է վերաբերում, թե՞ այն ընդհանուր է բոլոր ուսմունքների համար, որոնք փնտրում են ճշմարտության, իրականության բացահայտման ուղիները:

Այն հասկանալու համար մենք հետևեցինք Է. Ֆրոմմի օրինակին, ով գտնում էր, որ հոգեվերլուծության գլխավոր սկզբունքը արտահայտված է աստվածաշնչյան հետևյալ տողերում. **«Եվ կճանաչեք ճշմարտությունը, և ճշմարտությունը ձեզ կազատի»** (Հովհ. 8. 32) և փորձեցինք պատասխանը փնտրել հենց այնտեղ:

Այդ տողերը գրված են Նոր Կտակարանի **«Ճշմարտությունը ազատարար»** բաժնում (Հովհ. 8. 32): Սակայն այդ բաժինը սկսում է ոչ թե 32-րդ կետից, այլ 31-րդ, որտեղ, ճշմարտությունը ճանաչելու համար նախապայման կա: Այն է. **«Եթե դուք իմ ուսուցմանը հավատարիմ մնաք, իմ ճշմարիտ աշակերտները կլինեք»** [Հովհ. 8. 31] և հետո նոր կճանաչեք ճշմարտությունը և ճշմարտությունը ձեզ կազատի:

Ինչպես տեսնում ենք, Չ. Ֆրեյդը խոսում էր նմանատիպ նախապայմանի մասին, ասելով, որ եթե այցելուն չի հավատում հոգեվերլուծողի խոսքերին, նրան որպես հեղինակություն չի ընդունում՝ ապա չի կարող ճանաչել ճշմարտությունը (անգիտակցականում տեղ գտած հակումները) և բուժվել: Չհավատալու դեպքում, Չ. Ֆրեյդի խոսքով, այցելուին նույնիսկ չի կարող օգնել նրա բարձր մտավոր կարողությունները [10, էջ 421]:

Ճշմարտության ճանաչելիության շուրջ ստեղծված այս նոր իրավիճակում մենք գործ ունենք արդեն իրականության հարաբերական բնույթի հետ: Այս մասին մենք խոսել ենք մատերիալիստների և իդեալիստների միջև ծագած խնդիրները լուծելու ժամանակ: Մեր կարծիքով, այդ հայեցակարգերում (մատերիալիստական և իդեալիստական) պետք չէր փնտրել սխալ և ճիշտ մոտեցումներ, ինչպես անում էին բանավիճող կողմերը, դա տանում էր փակուղի: Այն լուծելու համար մենք առաջարկում էինք խնդրին տալ հոգեբանական լուծում, մասնավորապես. մատերիալիստների և իդեալիստների հակասությունների սկզբնաղբյուրը փնտրել նրանց գիտակցության (հոգեկան) վիճակներում, ինչի շնորհիվ ձևավորվում է այս կամ այն գաղափարախոսության ընտրության կողմնորոշումը [6, էջ 164–184]:

Այս կերպ լուծվում էր ոչ միայն դարերով եկած այդ երկու ուղղությունների միջև հակասությունները, այլ նաև լուծվում էին բազմաթիվ խնդիրներ, որտեղ ճշմարտության որոնումը արդյունք չէր տալիս:

Գիտակցության փոփոխված վիճակը համապատասխանելով որոշակի աշխարհայացքի՝ հետևում է հենց այդ աշխարհայացքին բնորոշ (գործող) ճշմարտությանը: Գիտակցության փոփոխված վիճակների արդյունքում ծնված ակնառու օրինակներ կարող ենք համարել Պտղեմիոսի գեոցենտրիկ և Կոպերնիկոսի հելիոցենտրիկ համակարգերը, Էվկլիդեսի և Լոբաչևսկու երկրաչափությունը, Նյուտոնի և Էյնշտեյնի ֆիզիկան և այլն: Այս ուսմունքներում, և ոչ միայն, մենք հանդիպում ենք միմյանց ուղղված սուր քննադա-



տություններ և հակասություններ: Սակայն, դրանցից յուրաքանչյուրն ունի իր հետևորդները և համախոհները, որոնք այն չափով են ճշմարտացի, ինչքանով նրանց ընդհամախոհները:

Թե ինչպես է ձևավորվում մարդու մոտ աշխարհայացքը, մենք այստեղ չենք քննարկի, չնայած այն բանին, որ այն, մեր կարծիքով, հոգեբանության համար գլխավոր խնդիրներից մեկն է: Միայն նշենք, որ անհատի համար պարտադիր պայման է տվյալ աշխարհայացքին հավատալը, հակառակ դեպքում այն կկորցնի իր իմաստը և չի կարող տվյալ անհատի համար հանդես գալ որպես այդպիսին:

Վերոնշյալ մեկնաբանություններին, եթե ավելացնենք այն հանգամանքը, որ հոգեվերլուծությունը (մնացած հոգեթերապիաները ևս) ձևավորվել է մի շարք փիլիսոփայական գաղափարների ազդեցությամբ, որոնք բխում են որոշակի աշխարհայացքից, ապա պարզ կդառնա, որ այդ տեսությունը ըմբռնելու՝ դրանում ճշմարտությունը տեսնելու համար անհրաժեշտ է համապատասխան գիտակցության վիճակ, ինչը ներդաշնակ կլինեք դրանում ներառված փիլիսոփայական գաղափարախոսություններին:

Այս մոտեցումը թույլ է տալիս բացահայտել նաև այն պարադոքսը, երբ որևիցե հոգեթերապևտիկ ուղղություն կարողանում է օգնել որոշակի ախտանիշներով այցելուին և միաժամանակ անգոր է գտնվում նմանատիպ ախտանիշներով մեկ այլ այցելուի դեպքում: Այստեղ մենք գործ ունենք այցելուի այնպիսի աշխարհայացքի հետ, ինչը թույլ չի տալիս ընդունելու մեկ այլ աշխարհայացքից ելնող մոտեցումները:

Ինչպես և հոգեվերլուծությունը, մնացած հոգեթերապիաները ևս, իրենց տեսության կազմավորման հիմքում կրում են որոշակի փիլիսոփայական գաղափարախոսություններ [7], և արդյունավետ հոգեթերապիայի համար դրանք պետք է հակասության մեջ չմտնեն այցելուի աշխարհայացքի հետ: Այդ հակասությունը հաղթահարելու ուղիներից մեկն էլ կարող է լինել այն, որ հոգեթերապիայի ընթացքում այցելուի աշխարհայացքը հնարավոր լինի փոփոխել այն կերպ, ինչը ներդաշնակ կլինի տվյալ հոգեթերապիայի աշխարհայացքին:

Վերոնշյալ հանգամանքի հաստատման օրինակ կարող է ծառայել հիպնոսի (դասական) ժամանակ դրսևորվող երևույթները: Դեռևս Ջ. Ֆրեյդն էր խոսում այն մասին, որ հիպնոսի միջոցով այցելուին ցուցաբերած օգնությունը արդյունավետ և երկարատև չէ (ի դեպ, ինչը պատճառ հանդիսացավ հոգեվերլուծության ստեղծման համար) [12, էջ 178–186]: Հիպնոսի ժամանակ այցելուի գիտակցությունը թուլանալով, պաշտպանական մեխանիզմները գրեթե վերանում են և թույլ են տալիս հիպնոթերապևտին միջամտել և փոփոխություններ կատարել այցելուի հոգեկան աշխարհում: Սակայն, ինչպես նշում էր Ջ. Ֆրեյդը, դրանք կարճատև բնույթ ունենին: Դրա գլխավոր պատճառ կարող էր հանդիսանալ այն, որ հիպնոսից հետո այցելուի մոտ վերականգնվելով գիտակցությունը՝ վերականգնվում էր նաև տվյալ

անհատին հատուկ գիտակցության վիճակը (աշխարհայացքը), ինչը, որոշ ժամանակ անց, վերականգնում էր նաև ախտանիշները:

Մեր կողմից մատնանշված մոտեցումը, իհարկե, լայնածավալ վերլուծության կարիք ունի, քանի որ շոշափում է մի հարց, ինչը ներառված է ոչ միայն հոգեբանության ուսումնասիրման շրջանակներում, այլ նաև դրանով հետաքրքրվում են փիլիսոփաները, ֆիզիկոսները և այլն: Այն ավելի ամբողջական ներկայացնելու համար անհրաժեշտ է ընդգրկել և մանրակրկիտ վերլուծության ենթարկել այդ խնդրի վերաբերյալ բոլոր գիտական մոտեցումները:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Լայբնից Գ.* Մետաֆիզիկական երկեր: Հրատ. Սարգիս Խաչենց: Եր., 2001. – 138 էջ:
2. *Շոպենհաուեր Կ.* Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները: Հրատ. «Սովետական գրող», Եր., 1979. 591 էջ:
3. Ճշմարտությունը ազատարար: Աստվածաշունչ: Հրատ. Մայր աթոռ Ս. Էջմիածին և Հայաստանի աստվածաշնչյան ընկերություն, Եր., 2003. էջ 132:
4. *Брейер. И., Фрейд З.* Исследования истерии. Собрание сочинений в 26 томах. Т. 1. Изд. Восточно-Европейский институт психоанализа. СПб.: 2005. 464 с.
5. *Гартман Э.* Сущность мирового процесса или философия бессознательного. Изд. Красанд, М.: 2010. – 440 с.
6. *Нагдян Р.М.* Метафизический подход к методологии исследования психического отражения реальности. // Дисс. доктор. псих. наук. Ер., 2015. 305 с.
7. *Паттерсон С., Уоткинс Э.* Теории психотерапии. Изд. Питер. СПб., 2003. 544 с.
8. *Спиноза Б.* Этика. Изд. «Азбука-классика», СПб., 2007. 352 с.
9. *Фромм Э.* Величие и ограниченность теории Фрейда. Изд. «АСТ», М., 2000. 448 с.
10. *Фрейд З.* Двадцать седьмая лекция. Перенос. Лекции по введению в психоанализ и новый цикл. Изд. «Фирма СТД», М., 2006. 607 с.
11. *Фрейд З.* Конечный и бесконечный анализ. Сочинения по технике лечения. Изд. «Фирма СТД», М., 2008. 440 с.
12. *Фрейд З.* Методика и техника психоанализа. По ту сторону удовольствия. Изд. Харвест, Мн., 2004. 432 с.
13. *Фрейд З.* Толкование сновидений. Изд. «Попурри», Мн., 2000. 576 с.
14. *Шопенгауер А.* Мир как воля и представление (дополнение). Изд. Харвест, Мн., 2005. 992 с.

#### ЗНАЧЕНИЕ ИЗМЕНЕННОГО СОСТОЯНИЯ СОЗНАНИЯ ПРИ ПСИХОТЕРАПИИ (НА ПРИМЕРЕ ПСИХОАНАЛИЗА)

*Р.М. Нагдян, Г.С. Есаян*

#### АННОТАЦИЯ

В статье представлено значение и влияние измененного состояния сознания пациента для эффективной психотерапии. В работе указываются также на те пути, посредством которых возможно создание определенного, благоприятного для пациента, состояния сознания.

**Ключевые слова:** психотерапия, измененное состояние сознания, пациент.

**THE ROLE OF ALTERED STATE OF CONSCIOUSNESS DURING  
PSYCHOTHERAPY (USING THE EXAMPLE OF PSYCHOANALYSIS)**

*R. Naghdyan, G. Yesayan*

**SUMMARY**

This article presents the role and influence of patient's altered state of mind for optimal psychotherapy. The article also pointout those possible ways to bring patient's state of mind to appropriate (favorable) condition.

**Keywords:** psychotherapy, altered state of mind, patient.

## ЖУРНАЛИСТИКА

### ВОЗНИКНОВЕНИЕ И ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНСКОГО МАСОНСТВА В СРЕЗЕ ПУБЛИКАЦИЙ С ПРЕССЕ

*М.Э. Авакян*

#### АННОТАЦИЯ

Статья посвящена возникновению и деятельности зарегистрированных армянских лож конца XIX века. Дается срез публикаций в республиканской прессе, касающихся масонских структур, действующих в различных странах, их направленности и проведения регулярных работ, сведения о известных членах армянских лож

**Ключевые слова:** масонство, зарегистрированные армянские ложи, армяно-российское взаимодействие, современное масонство.

Существует немало данных, что «зарегистрированные» армянские ложи появились к концу XIX века одновременно и во Франции, и на Кавказе, в частности, Тифлисе, как ответвления лож российского масонства, в городе Стамбуле (К.-Полисе) и других местах. В ближайшем прошлом армянское масонство периодически возникало и получила развитие на территории Османской империи – в крупных центрах армянской диаспоры, где тогда были созданы четыре масонских ложи. Значительное количество армян было вовлечено в различные масонские организации, а в XX веке уже в центре армянской диаспоры были организованы новые ложи. Существуют подтвержденные данные о существовании армянских лож на территории Османской империи, действовавшие во временном промежутке конца XIX – начала XX вв.: «Известно, что в середине 19 века английские, шотландские и французские масонские организации распространяют свою деятельность и на Ближнем Востоке, и в Османской империи при их поддержке открываются многочисленные масонские ложи, членами которых были и армяне. И даже в 1762 году из одного справочника Великой ложи Англии выясняется, что Великим мастером в основанной на Ближнем Востоке ложе назначен некий доктор армянского происхождения Манас» [1]. Тогда армяне, живущие на территории Османской империи, обманутые в своих чаяниях, обратили свой взор на масонские организации, так как «начиная с 30-ых гг. XIX века различные дипломатические посты в Османской империи занимали частично деятели армянской национальности, в том числе задействованные за границей, и принадлежали к французским и шотландским ложам и не отрицали данного факта. Здесь большую роль сыграли их, по крайней мере, определенной части, стремление и где-то романтические представления о членстве в масонских ложах и о разрешении различных проблем, касающихся армянства, при помощи тесных связей с влиятельными представителями государственной, дипломатической, культурной элиты Европы».

